№ 113 ԿԻՐԱԿԻ 26 ՄԱՅԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ 26 ՄԱՅԻՍԻ № 113

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԳԻՐ ԴՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ յայտնում է իր անդամներին և հայ հասարակութեանը, որ կիրակի, մայիսի 26-ին, ցերեկվայ ժամը 1-ին, կը կատարվի ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Խօջիվանքի հայոց գերեզմանատանը ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԳՐՈՂ

ԾԵՐԵՆՑԻ

423. գերեզմանի վրա նրա մահվան 25-ամեակի առիթով։ 1—1

Արտիստակ. Ընկ. թատրոն — Երկուշաբթի մայիսի 27-ին

„Биржевыя Вѣдомости" թղթակից

Ա. ՕԼԳԵՆԻՆԸ

Թիւրքահայաստանի հայկական վեց վիլայէթները ուսումնասիրելուց վերադառնալով կը կարդայ միայն մի դասախօսութիւն

ԱՆՀԵՏԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Դասախօսութեան ժամանակ ցոյց կը տրվեն մոգական լապտերով դասախօսի նկարած պատկերները։

ՏԵՂԵՐԻ ԳՆԵՐԸ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԵՆ։ ✦ ՍԿԻԶԲՆ Է ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 8½-ԻՆ։

Տոմսակները վաճառվում են թատրոնի կասայում առաւ. ժ. 10—2-ը և երբ. ժ. 6—10-ը։
առ. 424. 2—2

ՊՐՕԳԻՄՆԱԶԻՈՆ Կ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Պետական պրոգիմնազիոնների ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՎ։

Ցդաների և աղջիկների միատեղ ուսուցում։ Բացվում է III դասարանը։ Քննութիւնները պատրաստական Ա., Բ. և Գ. բաժանմունքները, I և II դասարանները մանելու համար՝ յունիսի 1-ից։ Խնդրագիրները և վկայականները ընդունվում են ամեն օր առ. ժ. 11—3-ը ցեր. Սերգիեվսկայա փող., տ. № 20, պրոգիմնազիոնի շինութեան մէջ։
(Հ.) առ. 429. 2—1

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. դահլիճում

(Աբաս-Աբադեան հրապ. № 7)

ԿԻՐԱԿԻ, մայիսի 26-ին, կը կայանայ

ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ-ԿԵՆՑԱՂԱԳՐԱԿԱՆ առաջին ՂԱՐԱԲԱՂՑԻԱԿԱՆ

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԵՐԵԿՈՅԹ

I

«ՂԱՐԱԲԱՂԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔ» պատկեր։

II

Երեկոյթը բաց կանի պ. ԼԷՕՆ մի քանի խօսքով։

Գրական-երաժշտական բաժին արևելեան ընտրեալ։

Մասնակցում են. օր. օր. Միլիոնչեան, Մ. և Շ. Մինասբէգեաններ, տիկ. ՑԱՍՄԻԿ, պ. պ. Մեծ-ԳՐԻԳՈՐ (խմբով), յայտնի պարսկական երգիչ Սէիդ, Բալա, Տալեան, Բենիկ, Սարդարեան և ուրիշները։

Խնդրվում է հիւրերին ներկայ լինել Ղարաբաղի տարազով։

Անտարակներին կը նուագէ Մեծ-ԳՐԻԳՈՐԻ խումբը։ ✦ ՎԵՐՋԸ ՊԱՐԵՐ։

Սկիզբն է երեկոյեան ժամը 8½-ին։

Տոմսերի գները 2 ռուբլուց մինչև 50 կ., աշակերտականը 40 կոպ.։

Տոմսակները կարելի է ձեռք բերել Կ. Հ. Բ. Ընկերութեան շինութեան մէջ։

Կարգադրիչ՝ Ս. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ
առ. 428. 2—2

Ռուսմնարան-Պանսիօնը եւ Մանկական-Պարտէզը

Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱՁՈՒԿԻ

(Հիմնված 1886 թ.)

ՓՈԽԱԴՐՎՈՒՄ է աւելի ընդարձակ բնակարան, որը յարմարեցված է յատկապէս դպրոցական հիմնարկութեան համար—

ՎԵԼԻԿՕԿՆԱԺԵՍԿԱՑԱ ՓՈՂՈՑ № 109 սեփ. տ., տէլէֆոն 122.
(Կ.) առ. (Կրիլովսկայա փողոցից՝ 3-րդ տունը)։ 409. 2—2

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ.
✦ ПОЛНОМѢРНЫЕ ✦

ОБОИ

ФАБР. СКЛАДЪ МАНГИКІАНА ПУШКИНСКАЯ № 7.

(Հ. Կ.) 357. 50—7

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ

Օգնական Prof. Posner-ի

Ընդունում է միզասեռական (վեներական) հիւանդներին Բերլինի իր խորհրդակցական կաբինէտի և պրոֆ. Պոսնէրի կլինիկայի մէջ։ Տալիս է նաև խորհուրդներ միւս մասնագիտութիւնների վերաբերեալ։

Հասցէն՝ D-r Muradoff Berlin. Iohannisstr. 15 (an der Friedrichstrasse). Telefon amt Norden 113—19.
(Կ.) առ. 830. 0—24

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչէվսկայա 13, տէլէֆոն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներին, նոյնպէս և վիրաբուժական կաբինէտ ունեցող մայրական stationarներ հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), վաղօրօք գրվելու պայմանով։

Ընդունելութիւն կանացի, ներին և մանկական հիւանդութիւն ունեցող երթևեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը։

Ընդունելութիւն պրոֆ. Մ. Ս. Սուբբոտինի կողմից վիրաբուժ. կաբինէտ ունեցող հիւանդների, վաղօրօք գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցեր. ժամը 1—2-ը։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան, Ն. Ն. Վասիլիևսկի, Վ. Ա. Զակրժէվսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Նովիցկիյ, Գ. Ն. Տէր-Սերսէսեան, Ն. Զ. Ռամիկեան, Ա. Բ. Փիշէր, Ա. Գ. Շահպարոնեանց։ Կօնսուլտանտ՝ պրոֆեսսոր Մ. Ս. Սուբբոտին։

(Հ.Կ.) առ. 779. 100—57

ԲԺԻՇԿ

ՅՈՒՍԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ

Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը։
Հասցէն՝ Ռտիշչէվսկայա № 1.
առ. (Կ. Ե. Հ.) 4. 100—58

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԸ

Մեր ընթերցողները կարդացին «Մշակի» աշխատակից Գր. Զալիտուշեանի խորիմաստ կոչը, ուղղված հայութեան բոլոր խաւերին՝ նպաստել դպրոցական ֆօնդի իրագործման, իբրև յաւերժ յիշատակ ազգային պատմական-կուլտուրական մեծ ոգնի՝ հայ գրերի գիւտի 1500-ամեակի։

Այդ ֆօնդը պէտք է ստեղծի, իրագործի ինքն ամբողջ հայ ժողովուրդը. ունևոր և չունևոր, հարուստ և աղքատ, կապիտալիստ և պրոլետար, բանւոր, վաճառական, արհեստաւոր, հոգեւորական, բժիշկ, փաստաբան, գիւղացի և քաղաքացի՝ ամեն մարդ իր լուման պէտք է ձգէ ազգային ընդհանուր գանձանակի մէջ, այն գանձանակի, որ պէտք է լինի հին, սիւն մեր դպրոցների, դպրոցների, որոնցից է միայն կախված և լեզուի պահպանութիւնը, և գրականութեան բարգաւաճումը, և մեր ապագայ կուլտուրան։

Ժողովրդի հետ միասին հայութեան բոլոր մտաւոր և բարոյական ոյժերը իրանց աշխատութիւնը, ջանքերը իսպառ պէտք է դնեն այդ մեծ գործի իրականացման համար ամեն տեղ՝ քաղաքներում, աւաններում, գիւղերում, դաշտերում, բուն երկրում և գաղթավայրերում։

Այդ նպատակին հասնելու համար, բոլորովին մի կողմն պէտք է թողնել որևէ ձգտումն, որևէ միտք՝ դպրոցական ֆօնդի կողքին մի ուրիշ ֆօնդ ստեղծելու, ինչպէս, օրինակ, ոմանք առաջարկում են հիմնել նաև գրական ֆօնդ։

Եւ մենք առաջարկում ենք մի կողմը թողնել այդ միտքը ոչ թէ նրա համար, որ գրական ֆօնդը անհրաժեշտ չենք գտնում, ոչ, այլ որովհետև չենք կամենում, որ ջլատվեն ոյժերը, ջանքերը, որովհետև աւելի նպատակայարմար և խելացի ենք գտնում նախ իրագործել մի արդէն սկսված գործ, որի գլուխ է կանգնել Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որի համար արդէն թոյլտուութիւն է ստացված, որի համար արդէն հանգանակութիւն շատ տեղերում սկսված է և, վերջապէս, որի նպատակը պարզ և մեկին է, այն է հայոց դպրոցների պահպանութիւնը։ Իսկ գրական ֆօնդի համար դեռ պէտք է թոյլտուութիւն ձեռք բերել, դեռ պէտք է որոշել նրա նպատակը, ֆունկցիան, որովհետև գրական ֆօնդը երկու նպատակ կարող է ունենալ, կամ հայ գրողներին օգնել նիւթապէս իրանց չքաւորութեան, հիւանդութեան, անկարութեան դէպքերում և կամ հայ գրականութեան զարգացմանը նպաստել, ձեռնարկելով մեծ և կապիտալ գրական աշխատութիւնների հրատարակութեան։ Այդ նպատակների համաձայն և կորոշվի, թէ ինչպէս և որպիսի մի օրէնք հաստատութեան ձեռքում պէտք է լինի գրական ֆօնդի պահպանութիւնը։

Այժմ միացեալ, միահամուռ ոյժերով իրագործենք դպրոցական ֆօնդը։ Այդ պարտականութիւնը կատարելուց յետոյ՝ միանանք և իրագործենք դարձեալ միահամուռ ոյժերով գրական ֆօնդը, կանխապէս որոշելով և նրա նպատակը։

Վերջապէս՝ երբ հրապարակի վրա է դրված երկու առաջարկ, երբ այդ առաջարկներից մէկի դէմ առարկութիւն կայ, իբրև անժամանակի և ոչ ըստ էութեան, իսկ միւսը՝ ընդհանուր հաւանութիւն է գտել և ունի ամենից շատ նպաստաւոր պայմանները աջողութեան համար, պարզ է, որ նախամեծարութիւնը պէտք է տալ այդ ընդհանուր հաւանութիւն գտած առաջարկին։

Ուրեմն, առ այժմ մի կողմն պէտք է թողնել գրական ֆօնդի միտքը և բոլոր ոյժերը, մտքերը կենտրոնացնել դպրոցական ֆօնդի իրագործման համար։

Հ. Առաքելեան

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

24 մայիսի

Մօսկվա.—Այսօր Մօսկվան հանդիսաւորապէս պատրաստվեց ընդունել Նոցին Մեծութիւններին. կէսօրից կանգ առաւ մայրաքաղաքի ամբողջ սովորական առևտրական կեանքը. մայրաքաղաքը ստացաւ տօնական կերպարանք։ Բոլոր առևտրական, բանկային, հասարակական հաստատութիւնները փակ են, գործարանները չեն աշխատում։ Բանւորներին և ծառայողներին ազատեցին ժամը 1-ից, որպէս զի հնարաւորութիւն տան նրանց երես առ երես տեսնել Ցարին։ Ալէքսանդրեան այգու մօտ գլուխների ծով է։ Պճնազարդ տիկինների թիւը շատ մեծ է։ Մայիսեան արևի ճառագայթների տակ ամեն ինչ հրաշալի գոյն էր ստացել։ Իրանց պատշաճ տեղերում կանգնել են զօրքերը և կրթական հաստատութիւնների սաները իրանց երաժշտախմբերով։

Ուղիղ ցերեկվայ ժամը 4-ին կայարանին մօտեցաւ կայսերական գնացքը։ Վագոնից բարեհաճեցին ելնել Կայսրը՝ Կայսրուհի Թագուհու հետ, Գահաժառանգը և Օգոստափառ Դուստրները։ Կայսրը եկատերինօսլաւեան գնդի համազգեստով էր և վրան Անդրէեվի ժապաւէնը դցած, Կայսրուհին՝ սպիտակ զգեստով և Անդրէեվի ժապաւէնով։

Ընդունելով քաղաքապետից և զօրահրամանատարից յուշագիրը, Թագաւոր Կայսրը անցաւ պատուաւոր պահակախմբի առաջից։ Երաժշտախումբը նուագեց, որին ձայնակցեց Մօսկվայի բոլոր եկեղեցիների զանգակների զօրանջիւնը։ Ապա Կայսրը զրուցեց կառավարիչ պաշտօնեաների հետ, որից յետոյ Կայսրուհու և Օգոստափառ Զաւակների հետ մտաւ արքայական սենեակը։ Այստեղ քաղաքագլխի պաշտօնակատար Բրիանսկին, գլուխ անցած քաղաքային վարչութեան, Մօսկվայի դումայի կողմից բաղդ ունեցաւ մատուցանել Նոցին Մեծութեանը աղ ու հաց փայտէ զարդանկար սկուտեղի վրա և ողջունել մի ճառով։ Կայսրը շնորհակալ եղաւ ողորմած դարձուածքներով։

Ապա աղ ու հաց մատուցվեց Մօսկվայի զեմստվօյի կողմից։

Հէնց այն է Կայսրը, դուրս գալով արքայական սենեակից, երևաց հազարաւոր ժողովրդին, օդը թնդաց ուժգին ուրայից, որ միախառնվեց զանգահարութեան հետ։ Կայսրը նստեց նժոյգի վրա, Կայսրուհին բարեհաճեց նստել շքակառքը, լծված à la domond. Մեծ Իշխաններին և Կայսերական Ընտանիքի մնացած Անձերին առաջարկեցին ձիեր, Մեծ Իշխանուհիներին և Իշխաններին՝ կառքեր։

Սկսվեց հանդիսաւոր շքերթը։ Առաջից գնում էր Նորին Մեծութեան անձնական պահակախումբը, սրա ետևից՝ Կայսրը նժոյգ հեծած, ապա պաշտօնական անձինք։ Կայսրին շրջապատել էր գեղեցկազգեստ հեծելազօր՝ կազմված բարձրաստիճան անձերից։

Կայսերական շքերթի ժամանակ տանեակ հազարաւոր բերաններից լսվում է ուժգին ուրա, զօրքերը ի-ջեցնում են դրօշակները, իսկ թնդանօթները պարզվում են շարունակ, երաժշտախմբերը իրանց հերթին նուագում են։

Ժամը 5-ին շքերթը հասաւ Սպասսկի դռներին։ Կայսրին ընդառաջ եկաւ միտրոպոլիտ Մակարին եպիսկոպոսներին և ուրիշ բարձրաստիճան հոգևորականների հետ խաչ ու Աւետարանով։ Կայսրը լսեց միտրոպոլիտի ողջոյնի խօսքերը և համբուրեց խաչը։

Եկեղեցական թափօրի ուղեկցութեամբ Նոցին Մեծութիւնները դիմեցին Կրէմլի Արքայական հրապարակը։ Այստեղ տեղի ունեցաւ զօրահանդէս։ Յետոյ Կայսերական Գերդաստանը մտաւ պալատ, որից յետոյ ժամը 6-ի մօտերը ցրվեցին։ Փողոցները մինչև ուշ երեկոյ լի էր ժողովրդով։ Մայրաքաղաքը փայլուն հրավառված է։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Մայիսի 27-ին, ռուսաց արտաքին գործերի մինիստր Սազոնովը հանդէս կը գայ Պետական Դումայում մի մանրամասն ճառով Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան մասին։ Ենթադրում են, որ այդ ճառի մէջ նկատի կառնվեն թէ Բալկանների և թէ Փոքր-Ասիայի վերաբերեալ խնդիրները։ Պետական Դումայի անդամներից շատերը մտադիր են խօսել արտաքին քաղաքականութեան մասին։ Ճառախօսների թիւում անուանում են Միլիւկովին, Պապաջանեանին և ուրիշների։

—

Գերմանական «Reichspost» լրագրի մայիսի 16/23-ի համարում տպված է «Հայկական հարցի նշանակութիւնը» վերնագրով մի յօդուած, որի բովանդակութիւնը կը տանք յաջորդ անգամ։

—

Կ. Պոլսից հեռագրում են, որ թիւրքաց կառավարութիւնը Ռուսաստանի աջակցութեամբ Ֆրանսիական սինդիկատին կօնցեսիա տուեց Սըվազ-Դիարբէքիր երկաթուղագծի կառուցման համար։ Անատոլիայի երկաթուղային վարչութիւնը բողոքեց դրա դէմ։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 13 մայիսի

Նորից գուժեր են հասնում գաւառներից. Բարվարը թալանված, հինգ մարդ սպանված, Ղզիմը պաշարված. սրանք պատահում են այն ժամանակ, երբ Հայաստանի բարեկարգումների հարցն է յուզվում Եւրոպայում և երբ ամենից աւելի պէտք կար, նոյն իսկ թիւրք կառավարութեան շահն էլ էր պահանջում գոնէ այս միջոցիս խաղաղութիւն պահպանել Հայաստանում։

Բարվար գաւառից հեռագիրը գուժում է, որ քիւրդերը յարձակվել են Բանիջան անուն գիւղի վրա, քշել են բոլոր ոչխարներն ու անասունները, թալանել են ամբողջ գիւղը՝ հանել տալով շինականների շապիկներն անգամ ու սպանել են հինգ հայերի։ Բարվարը Վանի հարաւային կողմում մի լեռնային քիւրդաբնակ գաւառ է, իսկ Բանիջանը մօտ 25—30 տուն բնակիչներով նրա սակաւաթիւ հայ գիւղերից մինն է, հայերն էլ քիւրդախօս են և քիւրդերի նման ապրում են խաշնարածութեամբ. կառավարութիւնը պատկանում են Բիթլիսի վիլայէթին. այս դէպքից յետոյ գաւառի սակաւաթիւ հայերն էլ չեն կարող անշուշտ կենալ նոյն գաւառում ու պիտի ցրվեն։

Ինչպէս հաղորդել եմ նախորդ թղթակցութեամբս, տէնիսցի քիւրդերը շէյխ Սէյիդ Ալիի գրգռմամբ ու առաջնորդութեամբը հաջի Թամարի որդի Իսա աղայի՝ պաշարել էին Ղզիմ գիւղն ու տեղատարափ գնդակներ էին տեղացնում նրա վրա, իսկ ոստիցի հայերը ինքնապաշտպանութեան դիրքի մէջ էին մտել, ոչխար ու անասուն, ինչպէս նաև մարդիկ փակված տներում, պաշարումը շարունակվել է մի շաբաթի չափ, իսկ նրանից յետոյ Մոկաց գաւառի միւդիր քիւրդ Մրթիլլահ-բէյը, որ տէնիսցիների բարեկամն է, զօրքեր է ուղարկել ու պաշարումը վերցնել է տուել. պաշարումը եթէ աւելի տևէր, գիւղը և անասունները մանաւանդ՝ պիտի կոտորվէին անշուշտ։ Մարակ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 15 մայիս

Անստուգութիւնն ու վտանգաւոր վիճակը կը շարունակեն Տարօնի վրայ իշխել։

Զխուր գաւառի հայաբնակ Աւղուտ գիւղի և երկու ուրիշ բոլոր քիւրդաբնակ գիւղերու շինականները լքեր են իրենց բնակատեղիները և կուգեն ընդմիշտ հեռանալ մեր տարաբաղդ երկրէն, որովհետև այլևս չեն կրնար տոկալ մեր կեանքին մէջ շատ սովորական երևոյթ դարձած քիւրդական թալանին, թիւրքական զատարաններու անարդարութեանը և կեանքի ու գոյքի անապահովութեանը։

Մուշի առաջնորդ Ներսէս եպ. Խաչատեան խօսակցութեան մը միջոցին առանց քաշուելու յայտներ է, թէ մենք կառավարութիւն չունինք և այժմ կապրինք կատարեալ անիշխանութեան մէջ։

Սասունն ու մեր շրջանի բոլոր լեռնային գիւղերը հիմա անաւոր դրութեան մէջ կը գտնուին, որովհետև քանի մը օրէն քոչորները լեռ պիտի բարձրանան, որ տանն քիւրդերը հիմա անասունները ոչխարները ու ամեն ինչ ունեցան։ Ամենայն դեպքերում ամենայն ինչ ունեցան։ Ամենայն դեպքերում ամենայն ինչ ունեցան։ Ամենայն դեպքերում ամենայ

հայերու հետ ընդհարումն անխուսափելի է։

Աւբանի ժողովուրդը պարարման դրութեան մէջ է և հրաժարեր է իր հեռաւոր արտերը մշակելէ։

Հակառակ մեր բուռն և խիստ բողոքերուն՝ տեղական մուհասէբէջին, որ այժմ կառավարչի փոխանորդն է և միանգամայն գիւղերը ցորեկ կերուխումի և զեղխութեան ետեւէ է ինկեր, վայրկեան մը անգամ չի մտածեր երկրին խաղաղութեան մասին։

Աւբանի գիւղապետն եկեր է այսօր ոստիկանապետին մօտ, խնդրելու որ ոստիկանները փոխանակ իրենց գիւղը մնալու և օրական մէկ ոսկիի վնաս հասցնելու գիւղին՝ թող երթան քիւրդերու գիւղերը նստին և հետապնդեն աւազակները։ Ոստիկանապետը, հայհոյելով և թքնելով գիւղացիներու երեսը, դուրս կը վռնտէ զանոնք։ Խիստ ցաւալի պարագան այն է, որ գիւղացիներն անկարող են բողոքելու նոյնիսկ այս վատ ու անարժան պաշտօնէին դէմ։

Տարօնի հորիզոնը մութ է և անաւուր։

Մշեցի

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՔԻՒՐԴ ԱԶԳԵՑԻԿԻ ՀԵՏ

Մենք առիթ ունեցանք տեսակցել մի ազդեցիկ քիւրդի հետ, որը խորապէս հետաքրքրվում է Արևելեան Անատոլիայի վիճակով և իր սրտին մօտ է առնում հայ-քիւրդական յարաբերութիւնների խնդիրը։

Նա գալիս է Կ. Պոլսից և գնում է իր հայրենիք՝ դէպի Սղերդի կողմերը։

Կովկասում նա իբրև անցորդ է։ Կովկասը նրա համար ճանապարհագծի դեր է կատարում ներկայ դէպքում։

Նրա անունն է Խայրէդդին Բեքզադէ։

Նա պատկանում է քիւրդական Բեքզադի մեծ տոհմին, որը շատ ազդեցիկ է Բիթլիսի և մասամբ Էրզրումի վիլայէթներում, ունենալով ճիւղաւորութիւններ նաև Խարբերդի, Վանի և Դիարբէքիրի վիլայէթներում։

Նա լաւ գրագէտ մարդ է, երկար ժամանակ ապրել է Կ. Պոլսում և պաշտօնավարել է Քէմալի վաշայի մօտ։

Մենք խօսեցինք Թիւրքահայաստանի վիճակի մասին։

Խայրէդդինը այդ երկիրը բարւոքելու միջոցը համարում է ազգերնաբնակցումը։ Եւ այդ պատճառով նա շատ հակակրող է պրինց Սաբահէդդինին, որին վերապահված է, նրա կարծիքով, դեր կատարելու առաջիկայում։

— Օրքա՞ն ճիշդ է,—հարցրի ես,—որ քիւրդերի մէջ շարժումներ կան ներկայում։

— Այո, կան,—պատասխանեց նա,—բայց ոչ հայերի դէմ։ Քիւրդերի մէջ կայ շարժում ազգերնաբնակցման ոգով։ Մենք քիւրդերս անկախ Քիւրդստան չենք ցանկանում, այլ բարեկարգված, տեղական ինքնավարական կեանք։ Եւ մենք համարում ենք հայերին բարեկամ, եղբայրակից ազգ, որի հետ ուզում ենք միասին գործել և առաջ գնալ։

Ես առարկեցի, որ քիւրդերն ունեն մի քանի համախմբումներ, որոնք ներկայումս համերաշխ չեն միմեանց հետ։ Մի քիւրդական համախմբում կունենայ մի դաւանանք, բայց միւսը կարող է ուրիշ տրամադրութիւն ունենալ։ Եւ եթէ մի շրջանում քիւրդերը կը պահեն իրանց զսպված, միւս տեղում կարող են թոյլ տալ իրանց անպատեհութիւններ։

— Ես խօսում եմ այն քիւրդերի մասին,—ասաց նա,—որոնք գտնվում են Բիթլիսի և Դիարբէքիրի շրջաններում։ Նրանք չեն համակրում հայկական ջարդերին և ցաւում են, որ մի ժամանակ նրանք խաբվել են և անարդ գործի խառնվել։ Սրանից 30–40 տարի առաջ քիւրդը և հայը մտերիմ էին միմեանց հետ և հաւատում էին միմեանց, բայց օսմանեան կառավարութիւնը դաւանգրական նպատակներով որսաց իր կողմ քիւրդերին և նրանց ղարձրեց գործիք իր դիտումները առաջ տանելու համար։ Դրժբաղդաբար, ներկայ կառավարութիւնն էլ նոյն խմորն ունի, ինչպէս և նախկինը։

— Ի՞նչպէս էք դուք վերաբերվում երիտասարդ-թիւրքերին։

— Երիտասարդ-թիւրքերին քիւրդերը չեն հաւատում,—յայտնեց նա.—և եթէ երիտասարդ-թիւրքերը հաստատ մնալով իրանց իշխանութեան մէջ՝ չը տան իրական ըէֆորմներ, քիւրդերը ստիպված կը լինեն ըողոքել աւելի աւելի կերպով։ Ահա դա է քիւրդական շարժման էութիւնը ներկայումս։

— Բայց այդ շարժումների ժամանակ,—առարկեցի ես,—կը գտնվեն քիւրդական հրամախմբեր, որոնք չեն ըմբռնի քաղաքական ծրագիրները և թոյլ կը տան ջարդեր և աւարառութիւններ խաղաղ հայ ազգաբնակութեան շրջաններում։

— Այդ չէ կարող ներկայումս տեղի ունենալ,—ընդգծեց նա,—որովհետև քիւրդական առաջնորդները ամեն միջոց պէտք է դործ դնեն խոյս տալու եղած սխալներից։ Առանձին պատահմունքներ եթէ լինեն, նրանք բացառութիւնները կը լինեն։ Բուսական է, որքան մեզ գործիք շինեցին, խայտառակ մի գործիք, որը եղբայրասպան անարժան դերի է ծառայում։ Ի՞նչ օգուտ ունեցանք մենք։ Ոչ մի։ Մենք քիւրդերս երջանիկ ենք ապրում։ Մենք ազգ ենք, մարդավայել կեանքով ապրող ժողովուրդ ենք։ Ոչ։ Որովհետև օսմանեան կառավարութիւնը մեզ բարեկարգ կենք չէ տուել։ Ես տեսնում եմ, թէ ինչպէս Թիֆլիսը մի հարիւր տարվայ ընթացքում ինչ գեղեցիկ քաղաք է դարձել։ Մինթէ նա այդպէս կը լիներ օսմանեան կարգերի մէջ։ Արդեօք քիւրդերը 600 տարվայ ընթացքում մի սրևէ կուլտուրական բարիք ստացի՞լ են օսմանեան կառավարութիւնից։ Ոչ։ Իսկ մեզ եղբայրասպան ազգ դարձնել, մեր անունը վարկաբեկել, մեզ միայն գործիք ճանաչել անտանարկելու համար՝ դրան այլևս անկարելի է հաշտեցնել։ Քիւրդերը և հայերը մի երկրի մարդիկ են, վաղուց, ազատական ժամանակներից միմեանց հետ ապրում են և ուզում նրանք պէտք է միասնակեցութեան վայելուչ եղանակը գտնեն։ Ես առանց զայրոյթի չեմ կարողանում յիշել, թէ ինչպէս հայկական ջարդերի ժամանակ քիւրդերի մի մասին վիճակված էր այնքան տարդի դեր կատարել։ Կայսն և այդ ժամանակ խելացի քիւրդեր, որոնք չէին համակրում կառավարութեան թելադրանքներին, որոնք պահպանեցին հայերին. բայց փաստն այն է, որ թիւրքաց վարչութիւնը կարողացաւ քիւրդերի մէջից գտնել իր նպատակների համար ծառայողներ։ Այժմ մենք քիւրդերս բոլոր-ծում ենք այդ բոլորի դէմ։ Ես խօսում եմ Սղերդի, Դիարբեքիրի, Էրզրումի քիւրդական խաւերի մասին։ Ինձ յայտնի չեն Պարսկաստանի սահմանագծի մօտ եղած քիւրդերի ծրագիրները։ Մենք շփումներ քիչ ունենք, որովհետև մեծ տարածութիւններով բաժանված ենք։

Ես դարձեալ կրկնեցի, որ մենք հայերս կարող ենք հաւատալ առանձին քիւրդ անհատների. որոշ կրթութիւն կամ կեանքի փորձ ունեցած քիւրդական ամբողջութեան մէջ կան բազմաթիւ անհանդիստ, գազանաբարոյ տարրեր, որոնք տրամադիր են վայրենութիւններ անել. ահա դրանք են մեզ անհանգստութիւն պատճառողները։

— Բայց դրանք միայն գործիքներ են, որոնք կառավարչական գործակալների թելադրանքով են գործում,—պատասխանեց նա։

— Դա սակայն մխիթարութիւն չէ ջարդվողի և կողոպտվողի համար։

Խայրէդդին Բարազին հաւատացնում էր, որ քիւրդ առաջնորդ տարրը, որը մօտ է քիւրդական ազդեցիկ շրջաններին, մտածում է հայ և քիւրդ ժողովուրդների մտերմացման և համերաշխ գործակցութեան մասին՝ իրագործելու բարենորոգումներ ապահովացման սկզբունքների վրա։

— Դուք կը լսէք գուցէ քիւրդական խլրտումների մասին Սղերդի կողմերում,—վերջացրեց նա.—հաւատացած եղէք, որ դա զուտ քիւրդական շարժում է և շատ հեռու է հայկական ջարդերի վտանգներ առաջացնելուց։ Քիւրդերը ռեֆորմների պահանջ ունեն և պէտք է յայտնեն կառավարութեան. իսկ հայերի դէմ նրանք ոչինչ չունեն։

Նա գովեց պրինց Սարահէդդինի ծրագիրը և ասաց, որ եթէ Սարահէդդինը դառնայ իր համախոհներով թիւրքական վարչութեան գլուխ, այն ժամանակ խոչընդոտները կը վերացվեն և Անատոլիայի բարեկարգութիւնը կերթայ կանոնաւոր ճանապարհով։

Խայրէդդին Բարազին յոյս յայտնեց, որ քիւրդերը կարող կը լինեն ապացոյցներ տալ այն բանին, որ նրանք չեն ցանկանում գործիք լինել օսմանեան կառավարութեան ձեռքին հակակուլտուրական նպատակների համար։

— Մենք յոգնել ենք, ասաց նա,—մենք մնացել ենք առանց ուսման, առանց բժշկի, առանց մարդավայել կենցաղավարութեան։ Մենք էլ ուզում ենք ապրել ինչպէս ուրիշ ազգերը աւելի բաւարար կարգ ու կանոնով։

Հաղորդեցի իմ լսածը։ Դա էլ մեր ժամանակի յայտնութիւններից մէկն է։ Հետաքրքրական են քիւրդական թռթռվանքները կուլտուրական պահանջների մասին։ Տեսնենք թէ երկրի իրականութիւնը ի՞նչ յայտնութիւններ կանի։

Ա. Բարանթար

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ԼՕՆԴՕՆԻ ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՐԴՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Դորձ.)

24 մայիսի

Լօնդօն.—Դեսպանաժողովի նիստը տևեց երկու և կէս ժամ։ Հետեւեալը կը կայանայ երկուշաբթի։ Բէյսէրի տեղեկութիւնների համաձայն, վեհաժողովը բաւական աջողութիւն է ունեցել Ալբանիայի հարաւային սահմանների և Եգէյեան կղզիների ապագայի հարցերի վերաբերութեամբ համաձայնութիւն կայացնելու ուղղութեամբ։ Շատ հաւանական է, որ վերջին հարցերի վճիռը տեղի ունենայ իրար ետեւից, քանի որ մինը կախված է միւսից, ըստ որում ալբանական սահմանի վերաբերութեամբ տեղի կունենայ կօմպրոմիս ֆրանսական և իտալական առաջարկութիւնների միջև։ Եգէյեան կղզիների մեծամասնութիւնը տրվում է Յունաստանին, Դարդանելին մօտ գտնվող երկու կղզիները մնում են Թիւրքիային, Տասոս կղզին յանձնվում է Բոլգարիային. ինչ վերաբերում է Փոքր-Ասիայի ծովափին մերձ գտնվող կղզիներին, Յունաստանից պահանջվելու է երաշխաւորութիւն, թէ նա այդ կղզիները ռազմական նպատակներով չի շահագործի։ Իտալիայի ձեռքում գտնվող կղզիները կը յանձնվեն Թիւրքիային այն ժամանակ, երբ նա կատարէ իր պարտականութիւնները Տրիպոլիսի հարցի նկատմամբ, յեսոյ մեծ պետութիւններին հաւանօրէն կաջողվի յանձնել նրանց Յունաստանին։

Բէյսերի տեղեկութիւնների համաձայն, յոյները առաջվայ նման հրաժարվում են բանակցութեան մէջ մտնել թիւրքերի հետ և մտադիր են մեկնել Լօնդօնից մի կամ երկու օրից յետոյ, սակայն սերը պատգամաւոր Պալօվիչը մի բանաձև է կազմել, որ յոյս ունեն՝ կը բաւարարէ թիւրքերին և յոյներին և հնարաւորութիւն կը տայ ստորագրել արձանագրութիւնը վեհաժողովի առաջիկայ ընդհանուր նիստում։ Բանաձևի էութիւնը հետեւեալն է. Բերլինի դաշնագրի այն որոշումները, որոնք վերաբերում են մահմէդական բարեգործական հաստատութիւնների մասնաւոր սեփականութեան երաշխաւորութիւններին նուաճված շրջաններում, ինչպէս և այն յատուկ պայմանագրերը, որ կնքել է Թիւրքիան տարբեր տէրութիւնների հետ, մնում են իրանց այժի մէջ. անհրաժեշտ միջոցներ գործադրելու մասնրամասնութիւնները կորոշվին այն համաձայնութիւններով, որ կնքելու է Թիւրքիան համապատասխան տէրութիւնների հետ։ Այնուհետև նախագծվում է արձանագրութեան մէջ մտնել այն հաւաստիացումները, որ Յունաստանը պահանջում է Թիւրքիայից։ Հիմք կայ կարծելու, որ Թիւրքիան չի առարկի այդ դեկլարացիայի դէմ, երբ իմանայ, որ Յունաստանը համաձայն է ընդունել արձանագրութիւնը։ Այն վարձատրութեան չափի հարցը, որ տրվելու է Սերբիային մինչև պատերազմը ձեռք բերած թիւրքական տիրոյթների համար, յանձնվում է Պարիզի ֆինանսական մասնաժողովին։

Սերը պատգամաւորները մեկնում են երկուշաբթի։

Բէյսերի տեղեկութիւնների համաձայն՝ սերբական բանաձևը վերջնականապէս խմբագրված է անցեալ գիշեր չերնօգօր պատգամաւորների հետ խորհրդակցելուց յետոյ և նորից ներկայացված է յոյն և թիւրք պատգամաւորների քննութեան։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Դորձ.)

24 մայիսի

Եարօսլաւլ. — Կայսրը բարեհաճեց նուիրել 10,000 ր. Եարօսլաւլի և Բօսօվի աղքատ ազգաբնակութեանը բաժանելու համար։

Աթէնք.—Թագաւորական հրամանով զէնքի կանչվեցին 1913 թ. նորակոչ զինուորները։

Սալոնիկ.—Քաղաքական և զինուորական շրջանների տրամադրութիւնը կը-բում է աւելի լաւատես բնաւորութիւն։ Վենիզէլօսը հաւանօրէն երեկոյեան կը մեկնէ Աթէնք և մի քանի օր յետոյ կը վերադառնայ չորս պրէմիէրների խորհրդակցութեան, որից յետոյ, ինչպէս կարծում են, նրանք բոլորը կը մեկնեն Պետերբուրգ, ուր կը շարունակեն բանակցութիւնները։ Զէզոք գիծը յոյն և բոլգար զօրքերի միջև իրապէս համապատասխանում է երկու զօրքերի ներկայ դիրքին։

Գեներալ Իվանովը մեկնեց։

Բերլին.—Կայսրը այցելեց պետական կանցլերին և երկար խորհրդակցեց նրա հետ։ Քաղաքական շրջաններում դրան մեծ նշանակութիւն են տալիս նկատի առած Բալկաններում տիրող դրութիւնը։

Բերլին.—Կայսրաւ գերմանացիների և Բերլինում աշխատող բոլոր ֆրանսիացիների առևտրական ժողովը ֆրանս-գերմանական ակումբ հիմնելու համար։ Քաղաքական նպատակները հանված են։ Մտադրութիւն կայ Բերլինում և Պարիզում հաստատել առևտրական պալատներ։

Պարիզ. — Պուանկարէն երեկոյեան մեկնեց Տէտլօն ծովային նաւատորմին ներկայ լինելու համար։

Պարիզ.—Պատաը 347 ձայնով 210-ի դէմ վստահութիւն յայտնեց կառավարութեանը։

Պարիզ.—Մենատը ընդունեց բիւջէն։ Առաւօտեան 11 յեղափոխականների բնակարաններում կատարվեցին խուզարկութիւններ։ Գրաւվեցին փաստաթղթեր, որոնք պարունակում են հակամիլիտարական պրոպագանդա։

Լաղուշ.—Ապստամբ տեղացիք յարձակում գործեցին ազատական զօրքերի վրա, բայց յետ մղվեցին մեծ կորուստներով։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

(Լեհերէնից)

Դեռևս մթնաձուէին բերեց մի ծրար ճերմակեղէն։ Դրեց այն տեղանի վրա՝ ասելով յոյնած ձայնով.

—Ահա... սա բոլորն է, օրիորդ Եաղվիգա...

— Ա՜, այդ դուք էք, քոյր Թեկղա... մի վայրկեան... նստէք, խնդրեմ... շուտով կը փակեմ խանութը... իրիկնանացը միասին կուտենք...

Քոյր Թեկղան մատցրութեամբ ժպտաց և նստեց՝ տէր-ողորմեան ձեռքին։ Նա չափազանց վաստակաբեկ էր երևում։

Օր. Եաղվիգան գրատեղանի մօտ զբաղված էր հաշուով։ Իր սև գոգնոցի վրայից զննում էին մկրատը, մատիտը և բանալիքը։

Ուրախ-ուրախ ասում էր.

— Այսօր մենք ծախել ենք երկու խաչ... Թանգ տեսակներից... Մի հատ Անտոն Պադուանացի... Մի քանի Անարատ Յղութիւն... Իսկ աղօթագրքեր... այնքան՝ որ հաշիւը կորցրել եմ... Փառք Աստենաբարձրեալին։ Ի՞նչ կասէք, քոյրիկ. հը՞։

— Փառք Աստենաբարձրեալին, — արձագանգի պէս անդրադարձաւ միանձնուհու ձայնը։

— Իմ կարծիքս էլ այդ է,—հաստատեց օր. Եաղվիգան։

Իր գեր այտերը տատանվում էին գոհ ժպտից։

Այստեղ վաճառվում էին կրօնական գրքեր, սրբերի պատկերներ և արձանիկներ, ձուձև մէդալիոններ, յիշատակներ այլևայլ ուխտաւորութիւններից։ Արդէն հեռուից աչքի էր ընկնում տարօրինակ ցուցադարանը։ Ա՜խ, սրտաշարժ, պարզամիտ, մանկական հաւատով լեցուն ցուցադարան, ուր աղօթում էին սուրբերը, ճախրում էին հրեշտակները, բոցավառվում էր Յիսուսի սիրտը և քայլում էր միստիկական շուշանների մէջ մատաղահաս Ս. Կոյսը։

Ներսը լոյս և մաքուր էր։ Խաչերի շարքերը, անթիւ անհամար նահատակներ, սուրբ հայրեր, հրեշտակներ եկեղեցու նմանութիւն էին տալիս։ Արկղներում տպակուս տակ պահվում էին զանազան տէր-ողորմեաներ։ Արեգակի ճառագայթն այստեղ թափանցելով՝ այս ամեն կապոյտ, կարմիր, ոսկեգոյն սատափէ թելերը փայլում և շողշողում էին։ Իսկ ձեռքի դիպչումից քաղցրալուր զրնգոց էին արձակում, կարծես շառնակելիս լսէին իրանց շշնջիւնը. «Ողջոյն»։

Բաց դրան միջով երևում էին հրապարակը, մայր եկեղեցին, տների և խանութների շարքը։

Երեկոյեան դէմ անցորդների թիւը նկատելի կերպով աւելացաւ։ Կարմրագոյն ճառագայթներն ընկան փողոցի մի մասի վրա, միւս մասը թողնելով ստուերի մէջ։ Ծառերը տերեւաթափ էին եղել, և եկեղեցու շուրջը տիրում էր տարօրինակ մի ամայութիւն։

— Միքայէլը գրում է, թէ գոհ է իր տեղից,—նոյն ուրախ եղանակով շարունակեց օր. Եաղվիգան,—նա հիանալի տրամադրութեան մէջ է։ Սակայն պէտք է կրկին փող ուղարկել նրան... չէ բաւականանում... Տէր Աստուած, ապրուստն այնքա՞ն թանգ է։

— Ա՜հ։

Քոյր Թեկղան ցնցվեց, աչքերը չռած ոգեհարար նայում էր օր. Եաղվիգային։

Իսկ սա կողքում էր արկղները՝ հաւաքում էր պատկերները, թղթերը, գրքերը։

— Ուրեմն եղբայրդ առո՞ղջ է,—թոթովեց միանձնուհին։

— Կատարելապէս առողջ է։ Դուք ի զուր անհանգստանում էք նրա մասին, քոյրիկ...

Ի՞նչպէս վախեցայ հիմա... կարծեցի՝ թէ կորցրել եմ Մագդալինէին։ Ոչ, ան զոյ... Երևակայեցէք՝ այս պատկերը խառնել էի հաշիւների հետ... Ծիծաղելի՞ է։ Այնպէս յոգնում ես ամբողջ օրը խանութում... յետոյ էլ մաքրում դան չէ մնում...

Նրանք խօսում էին դէսից-դէնից։ Սպասվում էր մի բան։

— Մի՞թէ դու չես գիտենալ, որ խնայէք առողջութիւնդ, քոյր Թեկղա... Խորհուրդ է տալիս շատ չը յոգնել... Ես գրել էի, որ իր գնալուց յետոյ դուք շարունակ տկար էք...

— Նա խորհո՞ւրդ է տալիս։

— Այո՛, և այն՝ շատ եռանդագին։ Ինչպէս տեսնում էք, նա չէ մոռանում իր հին բարեկամներին։

Օր. Եաղվիգա բարեսրտաբար ծիծաղում էր։ Է՜, ասենք՝ միայն նա չէ, որ սիրում է քոյր Թեկղային։ Ինքը և Սօփիկը ուղղակի սիրահարված են նրա վրա։

— Օ՜։

Միանձնուհին թեթև կերպով ժպտաց։

Օր. Եաղվիգան սրտաբեղութեամբ գրկեց և համբուրեց նրան։

— Մի քիչ աւելի՞ ուրախ կացէք, քոյրիկ... Աստուած չէ սիրում, երբ մենք տրխուր ենք... Կեանքը հիանալի բան է... Դէ գնանք, քոյրիկ... Սօփիկը հիմա անհամբեր սպասում է մեզ։

Փողոցում նրանք գրաւում էին ընդհանուր ուշադրութիւն։ Միանձնուհին քայլում էր խորասուզված սառն դէմքով, աչքերը գետնին յառած։ Սպիտակ խոյրը թեթևօրէն թրպռում էր իր գլխին։ Նուրբ, գեղեցիկ դէմքը գունատ էր երևում աշնանային իրիկնալոյսի մէջ։

Օր. Եաղվիգան բարձր հառաչում էր։ Ո՛չ, սա անտանելի է... ամենքը նայում են իրանց ետևից... անասնօթնե՛ր... և սակայն նա ժպտում էր աչքերով։ Բան երևոյթին՝ արտնչում էր միայն ձևի համար։

Վերջապէս նրանք դուրս եկան իրանց փողոցը։ Սրճարան, կամաւոր սենեակներ, և սա իրանց տունը։ Արագ մտան դարպասի միջով և չքացան բակում, ինչպէս մի անդունդի մէջ։ Բարձրանում էին նեղ, ոլորուն, մութ սանդուղքով։

Միանձնուհին աղօթք էր մրմնջում. այնպէս կասած էր՝ կարծես մէջքին մի ծանր բեռ լինէր։

— Ինձ թւում է, թէ խակոն պէտք ընկնեմ,—հեալով ասում էր օր. Եաղվիգան։

Բնակարանը զարդարուն, գրեթէ ճոխ էր։ Դիմաւորեց օր. Սօփիան՝ նիհար, տգեղ, կարբոլով։ Երկար գրկում և համբուրում էր միանձնուհուն։

— Վաղուց է մեզ մօտ չէք եղել, քոյրիկ... Մի՛կօ, անպիտան շնիկ, մի հաշիր...

Իրարանցում եղաւ։ Փողոցից յետոյ այստեղ թւում էր այնպէս խաղաղ... Իսկոյն ինչեցրին վարագոյրները։ Շողաց էլեքտրականաւորութիւնը։ Պպզում էր արծաթէ սրճարանը, զնգզում էին գդալները և բաժակները։ Բոյրերի դէմքերը փայլում էին։ Նրանք միղմաբար ժպտում էին՝ կուշտ, անվրդով, ինքնագոհ։ Ամբողջ կեանքն անցել էր սահուն, տրամութեան մի նշոյլ անգամ չէր դիպել իրանց։ Նրանք համարձակ կարող էին պահանջել ուրիշներից անթերութիւն։ Զէ որ կեանքը, նրանց կարծիքով, այնպիսի մի դիւրին և հաճելի բան է։

Միանձնուհին տխուր շրջանայում էր։

Կարնու փայտէ պահարան, բարձրամէջք աթոռներ, իսկ դէմը՝ դուռ դէպի մեկնած եղբօր սենեակը։

Յուսահատ ուշադրութեամբ երկար՝ նայում էր այն կողմը։

Արտասանեց կամացուկ և իբր անտարբեր եղանակով.

— Վարձով կը տա՞ք պ. Միքայէլի սենեակը։

— Այո՛... այո՛... ի հարկէ։

Քոյրերը խօսում էին միաբերան։ Երեք սենեակ իրանց համար շատ է... Միլիօնատէր հօ՛ չեն... Ծախսերը... Մեխակին էլ պէտք է օգնել։

Օրիորդները խանդավառութեամբ էին յիշում իրանց եղբօրը։ Օ՛, նա մարդ կը դառնայ... անպատճառ կը դառնայ... Տէր Աստուած, ինչպիսի՛ խաղեր էր սարքում։

Կանայք նրա համար խելքները կորցնում էին... հանգստութիւն չէին տալիս նրան. յիմարնե՛ր... ներս էին պրծնում այստեղ, ուզղակի բնակարանը... Բայց ոչի՛նչ, Մեխակը կը զգաստանայ։ Ամենից հաւանական է, որ կամուսնանայ կրտսեր Սաֆոեկայի հետ. այն շիկահերը... այո՛, հիանալի աղջիկ է...

Միանձնուհին սեղմում էր ձեռքում բռնած տէր-ողորմեան, դէմքը դժգոյն, դժգոյն, տարաբաղձ արտայայտութիւն ստացաւ, կարծես արձանացած վիշտ լինէր և այդպէս մնաց, առանց մի բառ արտասանելու։

— Քոյր Թեկղա, դուք տկա՞ր էք։

— Այո՛, մի քիչ։

Բայց թող նրանք չանհանգստանան։ Հնազանդութեամբ հետեւեց օրիորդներին դէպի Միքայէլի սենեակը։

Այստեղ ամեն ինչ իր տեղումն էր առաջվայ պէս, միայն երկարաձիգ կանաչ ծաղկամանները դատարկ էին և այս ամենքանը մաքուր չափ խորը խոցեց միանձնուհու սիրտը։ Վերջին կաթիլն էր այդ, որ լցրեց վշտի բաժակը։

Քոյր Թեկղան սկսեց դանդաղ լալ։

Մարեցնօրէն հեկեկալով կրկնում էր.

— Այնպէս սիրում էի նրան... Այնպէս սիրում էի, ողորմած Աստուած...

Քոյրերը սարսափից պապանձվեցին, սեա՛ իրանց առաջը բացված մի անդունդ տեսան։ Ի՞նչ, այս միանձնուհին... Խելացի, մաքուր, հպարտ քոյր Թեկղան... Կարելի բան է միթէ։ Սա մի գիւտային փորձութիւն է։ Ի՞նչ կասէր տէր հայրը...

Օր. Եաղվիգան ինքը լալու տրամադրութիւն էր ցոյց տալիս։ Օր. Սօփիան սեղմեց իր նուրբ շրթունքները։

Թեթևօրէն և փոքր ինչ զզուանքով դիպաւ միանձնուհու ուսին։

— Քոյր Թեկղա, այդ վայել չէ ձեզ... հանգստացէք...

Օր. Եաղվիգան թոթովում էր անհասկանալի կերպով։ Ո՛չ, քոյր Թեկղան հարկաւ սխալվում է... այդ միայն թւում է իրան... Նա չէ սիրում Մեխակին... այլ միայն սովոր է միշտ տեսնել նրան... Մեխակը կա-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵԾԱՄԻՏ ԹԻՖԼԻՍԻ ԱՆՀԱՄ ՎԷՃԵՐԸ

Մ[illegible]թէ մեծամտութիւն չէր Թիֆլիսի կողմից պահանջել, որ հայ ազգութեան 400-ամեակը կատարվի անպատճառ Թիֆլիսում։ Ե՞րբ և ո՞ր օրից հայի արիւը ծագել է... Թիֆլիսից։

Կան Թիֆլիսում հայ լրագիրներ, շաբաթաթերթեր և ամսագիր, կան պաշտօնի գրողներ, հրապարակախօսներ, ազգային գործիչներ. և այդ բոլորը պատիւ է բերում ոչ Թիֆլիսին, այլ մի տասնեակ անխոնջ գործիչներին, որ յանուն ազգութեան և գաղափարի գործում են, երբեմն կարօտ չոր հացի...

125,000 հայ ապրիր չի տալիս մի տոկոս հայ կարդացող, և բազմաշատ, հայաբնակ Կովկասի մայրաքաղաքը կարծես մի անապատ է հայութեան համար և չէ կարող ապահովել ոչ հայ լրագիր, ոչ հայ գրող...

Շատ հայ և այնքան քիչ հայութիւն։

Ճիշդ էր, որ մեծամտութիւն էր պահանջել, որ մենք գայինք մեծ ոստի օրը Թիֆլիս երկրպագութեան համար։

Չոկ բան է էջմիածինը։ Այնտեղ կան գոնէ մեզ համար թանգ և նուիրական գերեզմաններ և մեր պատմական վանքի, պատի և անուան յիշատակներ։ Այնտեղից երևում են և ժպտում մեզ Մասիսի երկու գագաթները։

Շատ հայ և այնքան քիչ հայութիւն. և կարծես Թիֆլիսը ազգային զարգացման մէջ անշարժ կանգնած է դեռ կինոների դարաշրջանում...

Մեծամտութիւնից յետոյ անվերջ և անհամ վէճերը, բողոքները։

Էջմիածին թէ՞ Թիֆլիս։ Թիֆլի՛ս, Էջմիածի՛ն...

Դպրոցակա՞ն ֆոնդ թէ ուսուցչակա՞ն թէ գրական։

Ապահով է դպրոցը, ապահով է ուսուցիչը և ապահով է գրականական գործիչը. կան հայ կարդացողները։

Անապահով է դպրոցը. կարելի է ապահովել ուսուցիչներին և գրականական գործիչներին. հիմքը դպրոցն է միշտ։

Տաք վէճեր, անվերջ վէճեր...

Կարծես վէճերը դադարեցին, երկինքը պարզվեց. էջմիածինը ասաց իր վերջին, կարուկ խօսքը, և ազգը լռեց։

Ցանկալի նոր վէճեր։ Ընարոշական պայքար։ Նոր ընդունելութիւններ, հրաժարականներ...

Անվերջ, անհամ վէճեր։ Վերաւորանք, հերքումներ և դարձեալ վէճեր...

Եւ մեծ Թիֆլիսում, ուր շատ կայ հայ և այնքան քիչ հայութիւն, չի լսվում մի ուժեղ խօսք՝ բաւական է, յանուն ազգի շահերի, բաւական է, թողնենք մեր եսը, մեր անձնականը և սկսենք գործել...

Վիճում են, վիճում են անվերջ, իսկ ժամանակը, անողոք ժամանակը, որ յետ չի դառնում, առաջ է գնում, անցնում է և անցնում, մեծ ոստ, օրը քիչներիս տակն է արդէն...

Սակայն դպրոցական ֆոնդի համար ինչ է արել մինչև օրս մեծամիտ Թիֆլիսը իր զարգացման մէջ առած կինոների դարաշրջանում։

Թող արդարը, թող խելօքը, թող ազնիւը տակիարար էր վերաբերվում իրանց մէջ եղած մտերիմութեան...

— Եւ մենք ոչ ոքի չենք ասի, քայլիկ...

— Օ՜, ոչ ոքի,—ծանրաբար հաստատեց օր. Սօֆիան։—Մենք չենք ուզում արատաւորել անունդ... ոչ... ոչ...

Օր. Եաղվիան նուր բերեց։ Օր. Սօֆիան, շրթունքները սեղմելով, ասում էր մխիթարութեան բառեր, որոնք հնչում էին՝ ինչպէս դատարակչուհու յանդիմանութիւն։

Մխանձնուհին այլևս չէր լալիս։ Այս մի քանի րոպէի մէջ կարծես ծերացած լինէր։ Նրա անդոր վիշտը չափազանց անհանգիստ էր օրիորդներին։ Եւ ապա նա շրջանայում էր... շրջանայում էր անասելի տառապալի՜ց դէմքով...

Այո՛, հարկաւ նրանք չը պիտի յայտնեն քոյր Թեկեայի գաղանիքը, այս մասին կարող էր բոլորովին ապահով լինել։ Բայց Ջարդվեց իրանց բարեկամութեան հայելին։ Նրանք այլևս չեն յարգում իրան։ Այժմ նայում էին իրան բարձրից՝ ցածր։ Ինքը կարծես կանգնած լինէր նրանց առաջ իր կուսական զգեստից զուրկ, հասարակ և խե՛ղճ։ Նրանք չը կարողացան ոչ հասկանալ և ոչ ներել։

Քայլ Թեկեան հասկացաւ։

Ոնքի եւաւ սառն և անթափանցելի իր դատաւորների համար։

Դէ՜, ցտեսութիւն։

Նրան պահող չեղաւ։ Մ. Ե.

«ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԵԱՆ» ԱՌԻԹՈՎ

(Հ ա ն ա ք)

Ս. Տէր-Մելքիսեդէկեան «Մշակի» միջոցով դիմելով հայկական ուսուցիչներին, խնդրում է բացատրել երեխայ, զաւակ և որդի բառերի տարբերութիւնը։

Եւ հարցնում է.

«Ես ունեմ զաւակներ։ Աղջիկ են թէ տղայ։

«Դու ունես որդիներ։ Աղջիկ են թէ տղայ»։

Որքան էլ հայկական ուսուցիչ լինելու պատիւը չունենամ, այնու ամենայնիւ համարձակութիւն չի լինի իմ կողմից, եթէ ասեմ՝

Ծծկեր թէ մանուկ, աղջիկ թէ տղայ, օրիորդ թէ երիտասարդ, հասակաւոր թէ ծերունի, աշխարհական թէ հոգևորական, վաճառական թէ գիտնական, մի խօսքով «զաւակունք հայոց», «արք թէ կանայք» մեծ երեխաները պէտք է համարվեն, եթէ նորից թիւրքիայի խոստումներին հաւատան։

Եւ հաւատալուց յետոյ, պարզ է, որ թիւրքիայում ամբողջ ազգին պիտի անուանեն «փոքրիկ երեխաներ», որովհետև «երեխայ» բառում տղան ու աղջիկը չի նկատվում, այլ ամեն սեռի ու հասակի տգիտութիւնը, տղայութիւնը... այլ խօսք... յիմարութիւնը։

Եւ ուրեմն երեխայութիւնը յատուկ է և աղջկան, և տղային, և բոլոր մեծահասակ հայ երկսեռ զաւակներին ու «մանչերին», թէկուզ լինեն անդամներ ու անդամուհիներ այս և այն խմբերում և ընկերութիւններում, եթէ չիմանան ընդհանուր ազգայնը բարձր դասել մասնաւոր դիտումներից... որը երեխաներին է վայել և ոչ հարազատ երկսեռ զաւակներին։

Ասացի «զաւակներին» և ոչ որդիներին, որովհետև այդ մեզ մօտ այնպէս կը թարգմանվեր, ինչպէս ռուսերէնում СЫНЪ, СЫНОВЬЯ.

Երբ Աւետարանում մենք կարդում ենք՝ «Որդի Դաւթի», «Որդի Մարդոյ», «Որդի Աստուծոյ», այդ մենք ուատր, տղայ մտքով ենք թարգմանում և ոչ դուստր, աղջիկ բառով։

Այժմ, բացատրութեան մասին վերջացնելով խօսքս, կարող եմ ասել.

«Յանուն Հօր և Որդւոյ»...

Մ ո ծ ա կ (ոչ զանձակեցի)

ԳՆԱՑԵՔ ԼՍԵԼՈՒ

Վաղը ռուս ժուրնալիստ Օլգենինը կարդալու է իր դասախօսութիւնը «Անհետացող Հայաստանի» մասին։

Ինչու՞ ենք ասում դասախօսութիւն։ Մթէ դա մէկն է այն սովորական դասախօսութիւններից, որ համարեա ամեն օր մեզանում կարդում են զանազան անձինք զանազան նիւթերի մասին։

Ո՛չ, Օլգենինի դասախօսութիւնը գրված է արեան տառերով արեան մէջ խեղդվող մի ժողովրդի մասին։ Հազուագիւտ եղակի աղդարարութիւն պէտք է լսվի կենդանի վկայի բերանից անհետացող Հայաստանի մասին...

Ըմբռնում ես, արդեօք, ընթերցող, այդ խօսքերի բովանդակ սարսափը։

«Անհետացող Հայաստան»...

Հայաստանը դարերով արդէն կորցրել է իր քաղաքական անկախութիւնը, Հայաստան չունենք մենք այլ ևս։

Սակայն սուլթանի դժոխային երկրում ճակատագրական դասաւորութեամբ ունենք խօսքով ապրող, բայց իրօք սիսառնաքաքար կորչող, անհետացող թիւրքահայն...

Աշխարհիս վրա գոյութիւն ունեցող ժողովուրդների ամենից ապերջանիկին, ամենից իրաւազուրկին։

Մի ժողովուրդ, որ դատապարված է մշտական տանջանքների, մշտական բռնութիւնների, մշտական սպանութիւնների...

Անհետացող Հայաստան... անհետացող թիւրքահայ...

Երեսուն տարուց աւելի կովկասահայ լաւագոյն մտաւորները աշխատեցին, փորձեցին զոնաբերութիւններով դարման անել վիրաւոր եղբայրակիցներին։

Գնէ այդպէս է եղել իրողութիւնը, թէև հետևանքը սակաւ առացվել, որովհետև թիւրքահայը ենթակայ մնաց նախկին դաղանութիւնների կամքում, քիւրդ-թիւրքական արիւնռուշ կենցաղին։

Այն բոպէին, երբ մի ամբողջ ժողովրդի լինել կամ չը լինելն է մէջտեղ եկել, երբ թիւրքահայաստանում արիւն է հոսում, երբ նոյնիսկ անսիրտ եւրոպան արտաքին կեղծ ձևերը է ցոյց տալիս իրը համակիր արտայայտելով հայկական հարցին, ճիշդ այդ ժամանակ Կովկասի հայութիւնը, մանաւորապէս Թիֆլիսի ինտելիգենցիան անգործ է, գուցէ մեայն զեկավարները սոսկ ձևական աշխատանքի մէջ են։

Ընդհանուր վտանգն անգամ անկարողանում է միացնել անմիաբան հայերին...

Անհաշտ ոգին թագաւորում է նոյնիսկ այն մարմիններում, որոնք գլուխ են կանգնած պաշտպանելու հայկական մի անգամ տանուլ տուած դատը...

Ահա որտեղ է հայկական ողբերգութեան սկիզբն ու վերջը, ահա որտեղ է հայի խորտակված ապագայի պատճառը։

Եւ պէտք է շնորհակալ լինել Օլգենինին, որ իր բանախօսութիւնը երկու այնպիսի բառերով է որակել որ իցէ պահ մի սարսուռ, ցնցում առաջ բերին իւրաքանչիւր հայի մէջ... «Անհետացող Հայաստանը»...

Գնացէք և լսեցէք նրան։ Նա ձեզ շատ բան կասէ, մէկը միւսից ահարկու փաստեր թիւրք խելակորոյս իշխանութիւնների հայաջինջ քաղաքականութեան մասին, մէկը միւսից քսանեակ նկարագրութիւններ քիւրդ-թիւրքական հայդուկային ասպատակութիւնների, թալանների, սպանութիւնների, սիրագործութիւնների մասին, մէկը միւսից ցաւալի տեսարաններ անպաշտպան թիւրքահայ գեղջուկի և գեղջկուհու, ծերունու և երեխայի թշուառ ու անտանելի գոյութեան մասին։

Եւ անշուշտ այդ մերկ փաստերը կոշմարի նման կը ճնշեն ով գիտէ գուցէ միայն այդ բոպէին այն ամենին, ով զգում է իր հայկական ծնունդը...

Գնա, հայ մարդ, և լսիր մինչև վերջ կենդանի վկայի կենդանի պատմութիւնը քո եղբայրների մասին, որոնք կանգնած են խոր անդունդի առաջ... Ե.

ՕԼԳԵՆԻՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ցայտնում ենք այն դասախօսութեան ծրագիրը, որ Օլգենինը կը կարդայ վաղը Արտիստական Ընկեր. թատրոնում։ Հայկական հարցի ժամանակակից նշանակութիւնը Ռուսաստանի համար՝ բալկանեան պատերազմի հետևանքները ի նկատի ունենալով։ Հայկական հարցի կապը քիւրդականի հետ։ Ովքե՞ր են քիւրդները։ Անցեալի պատմութիւնից։ Քիւրդերի վերաբերմունքը Դէպի Թիւրքիա։ XIX դարի ապստամբութիւնը։ Արդի քիւրդական շարժման պատճառները, նրա զեկավարները, գաղանի ազդեցութիւնները ներկայ ապստամբութեան մէջ։ Քիւրդերի վերաբերմունքը դէպի Ռուսաստանը և դէպի հայերը։ Ինչպէս է կայանում քիւրդական ապստամբութեան վտանգը։

Հայերի կացութիւնը Վանի, Բիթլիսի, Դիարբէքիրի, Խարբերդի, Սըվասի և Երզրումի վիլայէթներում։ Նրանց թիւը։ Քաղաքական կուսակցութիւնները և նրանց գործունէութիւնը։ Տնտեսական դրութիւնը։ Թիւրքաց կառավարութեան ազգարարային քաղաքականութիւնը։ Հայերից իսլամ հոդերը, քիւրդերը և թիւրք իշխանութիւնը։ Հայերի հոդազուրկ վիճակը օրինական ճանապարհով։ Ազգարարային քանկ։ Գաղթականութիւն, նրա նշանակութիւնը։ Եկեղեցական հարցը, ազգային եկեղեցու վիճակը։ Ազգանակութեան վերաբերմունքը դէպի եկեղեցին։ Միսիոնէրների աշխատանքը։ Քիւրդերի և թիւրքերի վերաբերմունքը դէպի քրիստոնեայ եկեղեցին։

Հայերի իրաւական դրութիւնը։ Թիւրքաց վարչութիւնը և հայերը։ Ցանցանք ու անպատիժ դրութիւն։ Հայերի վիճակի բարելաւման հնարաւորութիւնը։ Բարենորոգումները և մեծ պետութիւնները։ Հայերի և եւրոպացիների փոխ-յարաբերութիւնները։ Եւրոպացիների պրովոկասիոն գործունէութիւնը՝ գրգռել տեղական ազգաբնակութեանը Ռուսաստանի դէմ։ Դրա քաղաքական ու անտեսական պատճառը։

Հայաստանը իբրև ապագայ շուկայ։ Նրա տնտեսական միջոցները, արդիւնաբերութիւնն ու առևտուրը։ Ռուսական առևտրական շահերը։ Հայերի քաղաքական դրութիւնը ապագայում։ Մեծ պետութիւնների դերը նախագծված բարենորոգումների մէջ։ Ռուսաստանի դիմադրութիւնը։ Հիւպատոսների թիւը աւելացնելու անհրաժեշտութիւնը։ Հայերի վերաբերմունքը առ Ռուսաստանը։ Նրանց հաւատը ու յոյսերը։ Մի շարք ազդու ապացոյցներ անտեսական ձգտման մասին։ Ի՞նչ պէտք է անեն այժմ իրանք հայերը իրանց ժողովրդի փրկութեան համար։ Դպրոց ու եկեղեցի։ Կուսակցութիւնների հաշտութեան և միացման անհրաժեշտութիւնը։ Ազգային բանկ։ Հայկական դրութիւնը։ Ռուսաստանի վերաբերմունքը դէպի հայկական հարցը։ Հայկական հարցը ներկայումս հանդիսանում է ռուս ժողովրդի համար ոչ միայն մարդասիրութեան հարց, այլ և պետական կարևորութիւն ունեցող մի ամենալուրջ խնդիր։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Բաղու, 21 մայիսի

I

Այսօր տեղիս նահանգական դատարանի քրէական բաժնում նշանակված էր տեղիս Հռիփսիմեան օրիորդաց դպրոցի ուսուցիչ Տիգ. Տէր-Գրիգորեանի գործը։

Այդ գործը ինչպէս «Մշակի», նոյնպէս հայ մամուլի և տեղիս «Baku» լրագրի ընթերցողներին մասամբ ծանօթ է։

1911—12 ուս. տարվայ երկրորդ կէսից նոյն դպրոցի աւ.-ուսուցիչ Ս. Հովհաննէսը բանաւոր գանգատներ է լսում թէ աշակերտներից և թէ ծնողներից, որ ուսուցիչ Տէր-Գրիգորեանը աշակերտուհիներից մէկի հետ ուսուցչին և աշակերտուհուն անպատշաճ մտերմութեան մէջ է։ Նախ աւ.-ուսուցիչը աշխատում է, յանուն դպրոցի շահերի, ծածկել և հրապարակ չը հանել, բայց երբ ուսուցչի և աշակերտուհու մասին ըստկսում են փողոցներումն ևս խօսել, աւ.-ուսուցիչը ստիպված է լինում հոդաբարձութեան ուշադրութիւնը հրաւիրել։ Վերջինս նոյնպէս, յանուն դպրոցի շահերի, անցեալ տարի մայիս ամսին որոշում է լուսութեամբ տանել։ Սակայն երբ հոդաբարձութեան մի մասը (12 հոդուց 6-ը) ամաչանոց է գալիս, հոդաբարձու և միևնոյն ժամանակ մանկավարժական խորհրդի նախագահ Տ. Բէզդատեանը, իր ընկերներով ժողով կազմելով, որոշում է կայացնում աւ.-ուսուցիչ Ս. Հովհաննէսին աւագութիւնից հեռացնել։ Վերջինս երբ այդ աւիթով պաշտօնական գրութիւն է ստանում, դիմում է թեմիս առաջնորդին և արդարութիւն խնդրում։ Առաջնորդը գրում է գործակալին՝ հրամայելով քննութիւն կատարել։ Գործակալ Ե. ք. Գեղամեանը քննութիւնը սկսելուց յետոյ, Տ. Տէր-Գրիգորեանը դիմում է դատախազին, մեղադրելով աւագ-ուսուցիչ Հովհաննէսին և ուսուցիչ Սահակեանին։ Առաջինին մեղադրում է այն բանի մէջ, որ իբր թէ սուտ լուրեր է հաղորդել հոդաբարձութեանը, իսկ Սահակեանին մեղադրում է, որ սա գրաւոր յայտնել է հոդաբարձութեանը թէ՝ եթէ Տիգ. Տէր-Գրիգորեանի վրա հաստատվի այն մեղադրանքը, ինքը անկարող պիտի լինի բարոյապէս ընկած ուսուցչի հետ կողք-կողքի մի դպրոցում ծառայել։

Մինչ երկու կողմից—հոգ. իշխ. և դատաստանական քննիչը—քննութիւնները շարունակվում էին, Բաքու է գալիս թեմ. առաջնորդը, որը, լսելով քաղաքացիներից իրերի դրութիւնը, կարգադրում է դադարեցնել սկսված գործը։ Սակայն ոչ միայն չէ դադարեցվում, այլ և ուսուցիչ Տէր-Գրիգորեանը մեղադրում է հոգևոր իշխանութեան քննիչին, որին նոյնպէս հրաւիրում են քննիչի մօտ։

Միւս կողմից «Մշակի» մէջ հրապարակ է գալիս Ա. Բարութիւնեան, որը իր կողմից՝ Տէր-Գրիգորեանին պաշտպանելու համար՝ մեղադրում է հ. Եղիշէին, թէ սա անաչառ քննութիւն չէ կատարել։ Գործը աւելի է բարդանում և անցնում նահանգական դատարանը։

II

Առաւօտեան դատարանի թէ ներսը և թէ դուրսը լցվել էր երկսեռ բազմութեամբ։ Ներկայ էին, իբրև վկաներ, մի շարք աշակերտուհիներ, մանկավարժ. ամբողջ կազմը և հոդաբարձու Ս. Բալայեանը։ Կային վկաներ և աշակերտուհիների ծնողներից։

Հովհան և Սահակեան ուսուցիչներին պաշտպանելու հրաւիրված էին երդ.-հաւ. Մելիք-Դաւթեան և Տը. Տրդատեան, հ. Եղիշէին պաշտպանում էր ինքն իրան, իսկ Տէր-Գրիգորեանի պաշտպանը երդ.-հաւատարմատար Զուբարն էր։

Նախագահ Օրլովը նիստը բանալուց յետոյ՝ խօսք տուեց երկու կողմի պաշտպաններին։ Տէր-Գրիգորեանի պաշտպանը խնդրեց յետաձգել գործը մի շարք պատճառաբանութեամբ, բայց միւս կողմի պաշտպանները չը համաձայնվեցին այդպիսի մի գործի համար երկրորդ անգամ դատարան գալ և խնդրեցին լսել։ Գործը լսելուն կողմնակից էր մասնաւոր հոգ. իշխ. քննիչ հ. Գեղամեանը։

Ուսուցիչ Տէր-Գրիգորեանը, որ մեղադրում էր նաև հ. Եղիշէին՝ իբրև անարդար քննիչի՝ հրապարակով ներողութիւն խնդրեց նրանից, իսկ պաշտպան Զուբարը իր կողմից արդար յայտարարեց։ Հ. Գեղամեանը ներելով ուսուցչին՝ խնդրեց նախագահից արձանագրութեան մէջ մտցնել այդ պարագան։

Ապա դատաւորները առանձնացան և կէս ժամից յետոյ նորից եկան դահլիճ, ուր յայտարարեցին, որ քննութիւնը պիտի կատարվի դռնփակ։

Հետաքրքրվող հասարակութիւնը ստիպված եղաւ հեռանալ։ Ներսը մնացին մի քանի հոգի։

Դատարանը, լսելով վկաներին, միանգամայն արդար յայտարարեց Ս. Հովհաննէսին և Բ. Սահակեանին, նրանց իրաւունք վերապահելով մեղադրելու ուսուցիչ Տ. Տէր-Գրիգորեանին։

Երդ.-հաւ. Զուբարը հրաժարվեց պաշտպանել ուսուցիչ Տէր-Գրիգորեանին։

Ս. Գարագաշ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Երկկ Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեոդորովնայի ծննդեան օրվայ առիթով զինուորական տաճարում կատարվեց պատարագ և մաղթանք, որի ժամանակ Արքէպի սարից պարպեցին 21 թնդանօթ։ Մաղթանք կատարվեց նաև բոլոր ազգութիւնների աղօթատներում։ Քաղաքը ցերեկով զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան հրավառված էր։

— Բաթում մեկնեց Կովկասի փոխարքայի օգնական գեներալ Շատիլովը։

— Մեզ հաղորդում են, որ Ժամհարեան գիւղատնտեսական դպրոցի կանոնդրութիւնը հաստատված է երկրագործութեան մինիստրութեան կողմից։ Դպրոցը կը բացվի Գանձակի մօտ։ Ներկայումս պատրաստվում է դպրոցական շէնքի մակարդակը։

— Այսօր Խոջիվանքի գերեզմանատունը ցերեկվայ ժամը 12-ին կը կատարվի հոգեհանգիստ Ծերենցի գերեզմանի վրա մահվան 25-ամեակի առիթով։

— Պետերբուրգում լոյս է տեսել երաժիշտ Ռոմանոս Մելիքեանի մշակած «Հայ ժողովրդական երգեր» ցիկլի առաջին սերիան։ Սերիան կազմված է վեց երգից, հրատարակած իւրաքանչիւր համարը զատ։ Տպագրութիւնը արված է լաւ թղթի վրա (in 16) ու մեծ խնամքով. իւրաքանչիւր համարը արժէ 10 կոպ։ Շապիկի վինիետը ընտրված է կօնկուրսով։

— Այսօր, մայիսի 26-ին, Կոմիտ. Հայոց Բարեգործ. Ընկ. դահլիճում տեղի կունենայ դարաշրջիկական անդրանիկ գրական, երաժշտական, կենցաղագրական հանդիսաւոր երեկոյթ՝ ճոխ ու բազմակողմանի բովանդակութեամբ։ Տոմսակի գներն են՝ 2 ր.—50 կոպէկ։

— Հռոմէա - կաթոլիկների եպիսկոպոս Կեսլերը մեկնեց Մանգլիս։

— Թիֆլիսի նահանգապետ Զերնեավսկին մեկնեց Գօրի։

— Փլեոյանի առատական գիտելիքների և եւրոպական լեզուների դասընթացքներում աւարտական քննութիւնները աւարտվել են։ Այս տարի դասընթացքների բոլոր բաժանմունքներում եղել են 284 մարդ, որից 53 կանանց սեռից։ Առատական բաժնում աւարտել են 161 մարդ, որանցից 12 ռուս, 20 վրացի, 116 հայ, և ուրիշ ազգութիւններից 13։

— Այսօր ժողովրդական Տանը ցերեկով բժ. Մուսխալովը կը կարդայ դասախօսութիւնմարդ ու արեան շրջանառութեան մասին։ Երեկոյեան նոյն տեղում տեղի կունենայ Հանակօի Օսայի ներկայացումը։

— Այսօր Հաւաքարի կայրերի դպրոցում սկսվել են քննութիւնները։

— Վրաց Գիւղատնտեսական Ընկերութիւնը մի մասնաժողով է ուղարկում Վրաստանի զանազան տեղերը երկրագործական հետազոտութիւններ կատարելու նպատակով։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆԵՐԸ

(Քաղված «Արարատ» ամսագրից)

— Կենդակ Կովկասի Հայոց Բարեգ. Ընկ. անունով, որով ընդունելով Ընկերութեան հովանաւորող պատուաւոր անդամի կոչումը՝ օրհնեց Ընկերութեան ազգօգուտ երկրագործական գործունէութիւնը, բոլոր անդամներին և ճիւղերին։

— Դիւանի շրջաբերական գրութիւններով յանձնարարվեց Ռուսաստանի բոլոր թեմական առաջնորդներին զեկուցանել Նորին Սրբութեան՝ թեմերում դպրոցական ֆոնդի օգտին հանգանակվող դրամի քանակի և յանձնաժողովների գործունէութեան մասին։

— Կենդակ էջմիածնի սինոդի անունով, որով առաջադրվեց նոր ձեռնադրված Վահան վարդ. Տէր-Գրիգորեանին Տաթևի վանքադրդ և վանքի վանահայր կարգել։

— Կենդակ Յուսիկ արքեպիսկոպոսի անունով, որով կարգվեց Մայր Տաճարի վերանորոգութեանց յանձնաժողովի նախագահ։

— Դիւանի գրութեամբ յանձնարարվեց Թիֆլիսի Մարիամեան-Յովհաննեան օրիորդաց դպրոցի հոգաբարձութեան, համաձայն իր խնդրի, նորից վերաքննութեան ենթարկել նոյն դպրոցի ծրագիրն և իրանց դիտողութիւններով հանդերձ ներկայացնել Նորին Վեհափառութեան։

— Կենդակ էջմիածնի սինոդի անունով, որով ուղարկվեց ներքին գործոց մինիստրի գրութեան պատճէնը, որով թոյլ է տալիս Նոր-Նախիջևանի, Բեսարաբիայի և Աստրախանի թեմերում յաջողդները կարգել։

— Դիւանի գրութեամբ յանձնարարվեց Եւրոպայի առաջնորդ Գէորգ արքեպիս. կոպոսին գիտակ անձանց օգնութեամբ կազմել և ներկայացնել Նորին Սրբութեանը Եւրոպայում ապրող բոլոր հայերի մասրամասն ցուցակն ու վիճակագրական տեղեկութիւններ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Յունական ներկայացում

Մայիսի 20-ին, ժողովրդական Տանը, Թիֆլիսի յոյն դրամատիկ խմբի մասնակցութեամբ տեղի ունեցաւ յոյն լեզուով մի գեղարուեստական ներկայացումն, Աթէնքի թատրոնի յայտնի դերասան Վ. Արգիրօպուլօյի Թիֆլիս ժամանելու առիթով։ Խաղացվեց Վ. Շեքսպիրի «Օթելլո» ողբերգութիւնը, որի մէջ դերասան Արգիրօպուլօն կատարեց Օթելլոյի դերը աւելի հմտութեամբ և յոյժ գեղարուեստական կերպով։ Պարզ նկատելի է, որ պ. Արգիրօպուլօ տաղանդաւոր դերասան լինելուց զատ՝ նաև փորձված և Մելպոմենայի տաճարի լաւ շկոլա անցած սպասաւոր է։

Մենք մասնաւոր աղբիւրներից տեղեկացանք, որ պ. Արգիրօպուլօ բազմիցս հետեւած է մեր յայտնի ողբերգու պ. Ադամեանին։

Պ. Արգիրօպուլօ բացի լաւ դերասան լինելուց՝ այլև անուանի դրամատուրգ է և հեղինակ մի շարք պիէսների, որոնցից մէկը, «Պատրիարք Գրիգորը» կոչված պատմական դրաման, կը խաղացվի ժողովրդական Տանը մայիսի 27-ին։

Պ. Արգիրօպուլօյի խմբի մէջ կան նաև մի քանի այլ ընդունակ բեմական այժեր, որոնցից պիտի յիշենք տ. տ. Սանդիսին, Անգելօպուլային և պ. Սանդիսին, որոնցից առաջինը «Օտելլօյի» մէջ կատարում էր Էմիլիայի, Անգելօպուլան՝ Դեզդեմօնայի, իսկ պ. Սանդիսը՝ Եագօյի դերը, որի խաղը ընդհանուր առմամբ լաւ էր, թէև նա Եագօյի նման նենգաւոր տիպի կատարելութիւնը չը կարողացաւ տալ, որպիսի պակասութեան պատճառներից մէկն էլ թերևս նրա չափազանց երիտասարդութիւնն է։

Վ. Արգիրօպուլօյի խումբը շրջել է Կովկասի և Ռուսաստանի մի շարք վայրերը, որտեղ յոյն գաղութներ կան։

Մի խիստ ցաւալի երևոյթի վրա պիտի կանգ առնենք, որը, յամենայն դէպս, պատիւ չէ բերում տեղիս յոյն ազգաբնակութեան մեծամասնութեանը, մասնաւորապէս որ նրա անդամներից շատերը ունեւոր մարդիկ են։ Ներկայացման օրը թատրոնը կիսով չափ դատարկ էր։ Մենք տարակոյս ենք ենթադրել, որ դա հետևանք է այն բանի, որ յոյն գաղութի անդամներից շատերը անտեղեակ են եղել յունական ներկայացման մասին։

Վ. Արգիրօպուլօյի նման դերասանի թիֆլիս գալը ուրախալի երևոյթ է, հետևաբար և նա արժանի է խրախուսանքի։

Hellene

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ 75-Ա-ՄԵԱԿԻ ՇՈՒՐՋԸ

Հաճոյքով արձանագրում եմ, որ չը նայած վատաբիների նենգ, չկամ ու խարդախ դիմադրութիւններին՝ Ղարաբաղի թեմական դպրանոցի 75-ամեակի ոգեսխմբութիւնը և այս առիթով յօբելեանի յաւերժացման գործը ոչ միայն նշանակալից է լինելու, այլ և արդարացնելու է իմ յոյսը, որ տեսնում եմ դէպի իմ տարագիր սրբազան ծննդավայրի զաւակները։

Այո, նժդեհ զարաբաղցիք այսօր պէտք է լուսոյ փարոս՝ հայրենի դպրանոցի սգոյ քողը վերցնեն և հարսանեաց քօրոնաը դցեն նրա գեղանի գլխին։

Արդէն թազատրաքոյրերն ու մակառները մէկ-մէկ ուշի-ուշի են ընկնում իրանց անթառամ ծաղիկներից փնջերը՝ անմահական, կենսաբեր յաւերժ մնունդը Ղարաբաղի մատաղ մատաղ սերունդին բերելով։

Ցարդանք Ղարաբաղի հարազատ զաւակ պ. Բաղդասար Արզումանեանին, Ղարաբաղի թեմական դպրանոցի 75-ամեայ պսակի կնքաւոր-խաչեղբօրը։

Այս ըսպէին Ղարաբաղի թեմի առաջնորդ Զաւէն վարդապետից ստացածս նամակը լիուլի վաւերացնում է պ. Բաղդասար Արզումանեանի՝ Ղարաբաղի հարազատ զաւակին վայել՝ անդրաձ որոշումը՝ իր ծննդավայր Ղարաբաղի թեմական դպրանոցին ստանց մի որեւէ պայմանի 200,000 ր. ընծայաբերելը։

Ռուսաստան մեկնած Բարգէն և Զաւէն վարդապետները առաջիկայ շաբաթ կը վերադառնան Թիֆլիս, կը կազմվի ոգեսխմբութեան փայլուն ու պերճ հանդէսների վերջնական ծրագիրը և կորոշվի ոգեսկատարութեան ժամանակը։ Անշուշտ այս ամառ Ղարաբաղի կենտրոն Շուշի կը գան տարագիր զարաբաղցիներ՝ վայելելու հայրենիքի գգուանքն ու սէրը։

Աւելն դիւրութիւններ պիտի ունենան Եւլախից-Շուշի գնացողները։ Ճանապարհի հաղորդակցութիւնը հաճելի է անվելու, իսկ քաղաքում բնակարաններ ունենալը և այլ յարմարութիւններ այս ամառ Շուշի գնացողները կունենան լիուլի։ Խմբովին զբօսանք հայրենի սրբազան վայրերում, քաղաքում գեղեցիկ ժամանցներ՝ թատրոն, նուագահանդէս, դասախօսութիւններ, երեկոյթներ։

Ղարաբաղի հռչակաւոր բժշկապետներ, փաստաբաններ, գրական-հասարակական գործիչներ, արուեստագէտներ, ճարտարապետներ, գեղագէտներ, ինչպէս և անուանի ֆինանսիստներ, վաճառականներ այս ոգեսխմբութեան գալով հայրենիք Շուշու քաղաքային խորհրդարանում կունենան և մի շարք խորհրդակցութիւններ անելու հայրենիքը վերածնելու մասին։

Լոյս կը տեսնի օրեցեանի առիթով «Տարազի» յատուկ մի շքեղ ալբանակ՝ «Ղարաբաղ եւ Ղարաբաղցիներ»՝ իւրաքանչիւր ղարաբաղցու համար անհրաժեշտ գործ և հրճուանք։ Կարելին չափ, առանց բացառութեան, այս հանդէսի մէջ պիտի զետեղվեն ղարաբաղցի բոլոր, երկսեռ, այն անձերի պատկերները, որոնք երբևիցէ իրանց մի որևէ գործով օգտակար են եղել իրանց ծննդավայրին, կամ թէ իրանց գործունէութեամբ պատիւ են բերել Ղարաբաղին։ Իսկ այսպիսիների թիւը շատ-շատ է, և այս հրատարակութիւնը փաստօրէն ու բեմիէֆ կապացուցանէ, որ Ղարաբաղը յիրաւի առաջադիմութեան սիրոյ, միտքն ու գարկերակն է եղել և է։

Տ. Նազարեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Հռօմում մօտիկ ապագայում կայանալու է եկեղեցական ժողով պապի նախագահութեամբ մի քանի դաւանաբանական խնդիրների լուծման համար։

✦ Կոմս Վիտտէն, որ ներկայումս Բերլինում է, բժ. Դիլլօնի հետ խօսելիս յայտնել է, որ անգլօ-գերմանական մերձեցումը կը դառնայ խաղաղութեան կարևոր ֆակտօր։ Այն ժամանակ Եւրօպան կարող է փոքր ինչ շունչ առնել։

✦ Թիւրքիան և Բուլգարիան բանակցում են զինաթափ լինելու մասին։

✦ Շուտով Բերլին է գալու անգլիացի մի բարձրատիճան քաղաքագէտ՝ լորդեր Գոլդէնի և Մօրլէի սկսած բանակցութիւնները շարունակելու համար։

✦ Ամբողջ Մակեդոնիայում սերբերը բռնի միջոցներով զինաթափ են անում բուլգար ազգաբնակութեան։

✦ Հակառակ հերքումների, ամենահիշդ աղբիւրներից տեղեկացնում են, որ ինքնասպանութիւն գործած գնդապետ Բէդլի լրտեսութեան գործի առիթով հրաժարվել են աւստրիական գեներալ շտաբի կառավարիչ ֆօն-Գէներալ շտաբի կառավարիչ ֆօն-Գէցէնդորֆը և Գրազայի զօրաբանակի հրամանատար Գիլը։

✦ Աւստրօ-ունգարական դահաժառանգ Ֆրանց-Ֆէրդինանդը ծանր տրկար է։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

24 մայիսի

ԳՕՄԵԼ։ Լիբաւայի գծի շրջանում գը-նացքի խորտակման ժամանակ չորս հոգի ծանր վիրաւորվեցին, մօտ 50 մարդ ստացան ջարդուածքներ ու թեթև վէրքեր։

ԲՈՒԴԱՊԵՇՏ։ Փակվեց հրատարակիչների միջազգային կոնգրէսը։ Հետևեալը կայանալու է Պարիզում 1916 թ-ին։ Երեկոյեան կայացաւ խնճոյք և պատիւ կոնգրէսին մասնակցողների։ Ներկայ էր ժող. լուս. մինիստրը։

ՊԱՐԻԶ։ Վէրսայլի մօտերը բիպլանից ընկնելով մեռան օդաչուաց Բէրնարը և նրա հետ գտնվող կին Ամիսելը։

ՏԷՏՈՒԱՆ։ Տանժէրի շրջակայքում սպանվեցին չորս վիւղոր։ Դիշերս տեղի ունեցաւ յարձակում Դերզայի մօտերը բանակի վրա, սպանվեցին երկու հոգի և, Բենկօնի մօտի բանակի վրա, սպանվեցին 7 մարդ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գրաւվեց «Լուչ»-ի № 118-ը։

ՅԱՐԻՑԻՆ։ Մեչէտկա գետի մօտերը երեւան հանվեցին Բարի և Մաճայի ժամանակների թթարական շէնքերի մնացորդներ։ Կատարվում են պեղումներ։

ԿԻԵՎ։ Շաքարի գործարանատէր Գալպերինը պրոֆ. Բախմետիեվին յանձնեց 2500 ր.՝ հիմնելու լաբորատորիա վերակենցաղութեան (անաբիոզ) աշխատանքներ կատարելու համար և պատրաստակամութիւն յայտնեց միջոցներ տալ մանագիտական ինստիտուտ կառուցանելու համար։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Թ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՇԽԱՐՀԱԾԱՆՕԹ

ԿՐԷՄ ԱԶԻՄԻ

ՄԵՏԱՄՈՐՖՈԶԱ

Միակ ճանաչված՝ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ կանանց կողմից։ Անպայման արմատապէս հեռացնում է երեսի բծիկները, բշտիկները, մուները, այրուածքները, կնճիռները և այլ դէֆէկտները։



(26,յ.23) (Вил.27331) 3—2

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑԸ

ՄԵԿՆԵՑ ԿԻՍԼՕՎՕԴՍԿ

(Կովկաս. հանք. ջրերը)։

Հիւանդների ընդունելութիւնը «ՐՕՍՍԻԱ» հիւրանոցում։

օ.մ.) 377 100—96

Լոյս տեսաւ պատկերազարդ

«ԾԻԾԱՂԱԲԵՐԻ» մէջ մտնում են՝ Հայրիկ, Բիսմարկ, Գուշկին, Պարոնեան, Պըլը-Պուղի, Մօլլա Նասրէդդին և ուրիշ ազգային ու օտար զուարճախօսներ։

200-ի չափ **բնիր** անեկդոտներ, **128** նկներ։

Գինն է **30** կոպէկ։

Պահեստը մեզ մօտ. մեզանից զումարով գնողներին մեծ զեղչ նայած պահանջի քանակին։ Գիմել մեր մշակման հասցէով՝ Тифлисъ, Лысогорскій переулокъ, № 6. Хачатуру Хачатуряну.

Գիմել նաև գրավաճառներին։

(չ. կ.) 329. 20 9

Լոյս տեսաւ

ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Եւրօպական ձայնագրութեամբ, աշակերտների և ուսուցիչների համար։

Գինն է 25 կոպէկ։

Ստանալու համար գիմել հեղինակին՝ Анановское арм. женское училище, Учителю музыки и пѣнія А. М. Теръ-Осепянъ.

Ուսուցիչներին զեղչ 20%։

(ա.օ.) 420. 3—3

Ծախվում են

ՊԱՏԱՀՄԱՄԲ ՇԱՏ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ

Զուգանէ գերաններ (столбы) 10 հատ, երկաթէ պատշգամբներ 2 հատ, ներքևից պահարան-ձօղերով, երկաթէ սանդուղքներ 19 աստիճաններով, վառարանի պղինձէ օղանցուկներ, փայտէ երկ-փեղկ դռներ և լուսամուտներ, փայտէ սանդուղքներ 40 աստիճաններով։ Հարցնել Մադաթեան կղզու վրա՝ Զաղէթեանի փայտեղէնի գործարանի դիմացը՝ իշխ. Ցիցիանովի դվորում Ի. Շահումեանին, առ. ժամը 7-ից մինչև երեկ. ժամը 7-ը ամեն օր։

(կ.և.) 415. 3—2

Զարիահասների համար

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ,

Բժշկ. Քէլդէր Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ

1) «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան» (կանանց և տղամարդկանց վիներական և այլ ցաւեր), բազմաթիւ բէյֆպանեներով, խորհուրդներով և նկարներով։ Անհրաժեշտ բժշկարան է ամեն մի և նկարներով։ Անհրաժեշտ բժշկարան է ամեն մի չափահաս մարդու համար, նամանաւանդ այնտեղ, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ։ Լեզուն շատ պարզ ու ամենքին հասկանալի։ Գինն է **50** կ.։

2) «Տրիպէր (սուսուկակ) եւ նրա բժշկութիւնը» բէյֆպանեներով, բազմաթիւ խորհուրդներով ու նկարներով։ Գինն է **20** կ.։

3) «Հեմիկրանիայի ցաւերը կամ մօդնի իւրակէն», խիստ ծիծաղաշարժ վոդեվիլ միմիան չափահասների համար։ Գինը **20** կ.։

4) «Սօճայի նօսանդրէրը» յայտնի վոդեվիլը, շատ ծիծաղաշարժ 2-րդ հրատարակութիւն։ Գինը 15 կ.

5) «Միւնոյն դագաղում», պատմուածք հայ-թուրքական կռիւներից. գիմակների նկարներով։ Գինը 7 կ.։

6) «Լաճէֆի կենսագրութիւնը», պատկերով։ Ամենքին հասկանալի գրված։ Գինը 10 կ.։

Ուղարկում եմ բոլոր գրքերը միասին։ Պահանջողները պէտք է առանց գրկին գրքերի գինը մարկներով ճանապարհած ոլորը՝ բոլոր գրքերը միասին—17 կոպ. (Անպայման՝ գակազիօ)։ Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г Есаянцу.

(հ. կ.) 44. 100—37

ՐԱՖՖԻԻ ՄԱՀՎԱՆ 25-ԱՄԵԱԿԻ

✦ ԱՌԻԹՈՎ ✦

Լոյս տեսաւ Բ. անգամ

ՐԱՖՖԻԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

համառօտ հանրամատչելի տեսութիւն. անհրաժեշտ է ամեն մի աշակերտի և հայի համար։ Բաֆֆիի պատկերով։

ԳԻՆԸ 10 ԿՊ.։

Գումարով ուղղողներին զեղչ։

Դիմել հեղինակին՝ Тифлисъ, Семеновская № 9. А. ЕСАЯНЦУ. Նախօրօք ուղարկել 12 կոպ. մարկա։

(օ.մ.) 410. 3—3

Հեռու՛ կեղծ ամօթը

Ես օրհնաբանում եմ իմ ճակատագիրը, որը ինձ կարելիութիւն տուեց փորձել ինձ վրա «Բիօլա-Լասլէյի» այժը։ Ընդամենը 3 շաբաթվայ ընթացքում ես համարեա նորից ծնունդ առայ, ախորժակս աւելացաւ, անքնութիւնս անհետացաւ, երազախաբութիւնը և գլխացաւերը միանգամայն վերջացան, ջղային սիստեմս ամրացաւ, սեռ. գործունէութիւնը կատարելապէս նորմալ դրութեան է։ Խոստովանելով, որ այդ բոլորի համար ես պարտական եմ միայն «Բիօլա-Լասլէյ» դեղին, խնդրում եմ ըստ կարելիութեան տպագրել այս նամակը՝ ստորև դնելով լրիւ կերպով իմ ստորագրութիւնը, որպէսզի միւսները, դէն շպրտելով կեղծ ամօթը, օգտվեն այդ հրաշագործ դեղից։ Կիեվ, 19 սեպտ.։

Գ. Վ. Բաֆալովիչ

Եթէ Դուք հիւանդ էք ընդհանուր կամ սեռական թուլութեամբ, ունէք գլխացաւ, անքնութիւն, արեան պակասութիւն, տանջվում էք **օնանիզմից** ու նրա հետևանքներից, ունէք **վախկոտութիւն, բայ** յիշողութիւն, վիներակ. հիւանդ. հետևանքներ, եթէ Դուք ջղային էք, զրգռվող, յոգնած—խնդրէք դեղատոմսը մի տուփ «Բիօլա», սակայն իսկական «Բիօլա-Լասլէյ»։ Դա յայտնի Դուք փայլուն հետևանքներ կը տանաք։ Դա յայտնի դեղ է նէվրոստէնիայի դէմ և միանգամայն անվնասակար է։ Ցեղեկ. համար կարելի է դիմել՝ С.-Петерб., отд. 3 частн. почтов. ящ. № 371.

(յ.13) (П. 81576)

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ „ОДОБРИНЪ“
Только МИХАИЛА ЛЕБЕДЕВА
Съ надписью „Этикетъ утвержденъ правит.“.

Главный складъ: Кавказское Т-во Торговли Аптекар. Товарами—Тифлисъ, Баку, Батумъ

(կ.) 177. 0—10

Շնորհակալութիւն Զրի դեղատումի համար

Բղկոց և յարատև կապութիւն ունենալով՝ ես բերել տուի դեղապահեստից «Դ-ր Մէյէրի Սոմօսխիզէնը»։ Մարսողութիւնս, հէնց առաջին անգամ դեղը ընդունելուց յետոյ, բաւականին լաւացաւ, իսկ մինչև մէկ ամիսը ես այլևս կարիք չը զգացի դեղը շարունակելու։ Ես շատ գոհ եմ նրանով, որ յանձին «Սոմօսխիզէնի» ես գտայ իսկական միջոցը սոսմոքսի անկանոն գործունէութեան դէմ։ Յայտնում եմ Ձեզ շնորհակալութիւնս և ուրիշներին ևս խորհուրդ եմ տալիս գործադրել այդ դեղը սոսմոքսային հիւանդութիւնների ժամանակ։

Երբէք չեմ կասկածում նրանում, որ «Սոմօսխիզէնը» կարճ ժամանակում կը սատնայ լայն տարածումն։ Ուսուցիչ **Ս. ՌէՔՀՐՄԱՏՍԿԻ**։ «Սոմօսխիզէնը» կարելի է ստանալ դեղատներում 75 կոպէկով։

(П. 66970)

ՀՐԱՒԷՐ

Սրբազան առաջնորդ տէր-Մեսրոպ եպիսկոպոսի կարգադրութեան համաձայն, կիրակի, մայիսի 26-ին, ցերեկվայ ժամը 12-ին, ԶԳՐՈՒՇԵՆԻ Ս. ԱՒԵՏԱՐԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ծխական հրաւիրվում են ընդհանուր ժողովի։

Օրակարգի խնդիրներն են՝

1) Հաշուետուների ընտրութիւնը 1911—12 տարվայ դպրոցի և եկեղեցու հաշիւները քննելու համար։

2) Եկեղեցու վերանորոգութիւնը։

3) Եկեղեցապատկան տան երկրորդ յարկի շինութիւնը։

4) Գանձանակի վերացման խնդիրը։

5) Սարկաւագի խնդիրը։

6) Ուրիշ խնդիրներ։

Առանձին հրաւէրներ չեն լինելու։ Ժողովը, չը կայացած դէպքում, տեղի կունենայ հաւեալ կիրակի, յունիսի 2-ին։

Հոգաբարձութիւն

421. 2—2

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ իրատ. Գիբ-Ցերով

Հաշուապահական Կուրսեր

ամարային պարապմունքներով

ՅՈՎՀ. ԶԱԲ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Ընդունելութեան քննութիւնները մայիսի 30-ին և 31-ին։

I Թումանովսկայա փ. սեփ. տ. № 13 (առ. ժ. 9—2-ը)
Միխայլովսկի պր. № 53 (երեկ. ժ. 6—8-ը)։

հ.հ.կ. 382. 10—6

ՄԻ ՆՈՐ ԶԵՌՆԱՐԿ „ՀԻՊՆՕՏԻԶՄ“ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՆՑ ՈՒՍՈՒՑՉԻ։

Լոյս տեսաւ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԵՔԵՐՋԵԱՆԻ

«ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄՏՔԻ ՔԱԶԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ» գիրքը։

Այս ձեռնարկով ամեն ոք կարող է սովորել **հիպնօսիզմ**, նրա պատմութիւնը և օրէնքը։ Հիպնոտիզմի փորձառական հիպնոսների թէորիաները և կանոնաւորութիւնները։ Մարդկային մտքի երկուորեակ բնոյթը կամ գիտակցական և ենթագիտակցական մտքի փունկցիաները։ **Նեւրասթենիան եւ իստերիան** օրէնքը։ Բիլիզմ կամ հալլուցինացիա։ Կատատիպոխ։ Ցեղ-հիպնօզական ներշնչումներ։ Հիպնօզական սէանսներ և ինչպէս տալ։ Խորտրպի փոխանցումն կամ տելեպաթի։ Մասնաւոր պայծառատեսութիւն՝ արթուն կամ քնած դրութեան մէջ։ Ինչպէս կառավարել երիտասարդին ներշնչումով։

ՄԵՐ ՄՏԱՒՈՐ ԶՕՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԿԵՐՊԵՐԸ.—Հետևեալ դրական մասնաւոր գործունէութիւն։ Ինչպէս գործածել միտքը։ Ենթագիտակցութիւն։ Ցարատաև փափաքի ոյժը։ Կենտրօնացման ոյժը։ Կամքի ոյժը։ Ենթագիտակցական հնարաւորութիւնները։ Ինչպէս վարժեցնել ենթագիտակցութիւնը։ Ինչպէս գործածել ամբողջ միտքը։ Հաւատի ոյժը։ Ներշնչման ոյժը։ Ինչպէս կառուցանել մի զօրաւոր կամք։ Ինչպէս ձեռք բերել աշխոյժութիւն կենդանի հետևեալ հասցէով.—Ռուսաստանից. Դրքի արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար դիմել նամակով հետևեալ հասցէով.—Ռուսաստանից. Арутюнъ Шекерджянъ, 22 Тановская, Тифлисъ. Արտասահմանից. Haroutun Shekergian, 22 Ganovskaya, Tiflis, Caucasus, Russia.

(կ.) 385. 25—2

ԿԱՐՈՒՉԵՒԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

տղամարդկանց եւ կանանց հաղուստեղէնի

Ա.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՁԵՒՈՂ-ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Աշակերտ. և աշակերտուհիների ընդունելութիւնը ամարային գրաւպայի մէջ յունիսի 4-ից։ Պարապմունքները կատարվում են ընկ. կողմից կատարելագործված կօօրդինար սիստեմով։ Ակադեմ. ամբողջ կուրսը աւարտողները ստանում են ձեռ-վարպետի պաշտօն։ Մանրամասն ծրագիրը ուղարկվում է ձրի։ С.-Петербургъ. Невскій пр., 67.

Тел. 482—30. Правленіе. (П.83966) 2—1

կ.

Թիֆլիսի Հայոց Երաժշտական Ընկերութեան

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆԸ

Հայ երաժշտութեան զարգացմանը նպաստելու և հայ երաժիշտ-երաժշտագէտներին խրախուսելու նպատակով, վարչութիւնս, համաձայն Ընկերութեանս կանոնադրութեան նամաստ. 1-ի և 2-ի և ընդհանուր ժողովի որոշման, սահմանեց հետևեալ մրցանակները ամէն յօր. 1-ի և 2-ի և ընդհանուր ժողովի որոշման, սահմանեց հետևեալ մրցանակները ամենաշնորհաւոր գեղարուեստական աշխատութիւնների համար։

I. Ընկերութիւնս տալիս է իւրաքանչիւր մրցանակ 100 ր. ամենաշնորհաւոր մանկական ինքնուրոյն երգերի համար։ Ուղարկված երգարանը իր մէջ պէտք է պարունակի թուով 10 մանկական միաձայն և երկձայն երգեր ակնկալանի տեքստով։

Հաւասար թուով աշխոյժ երգեր գրողների միջև, ժիւրին բաժանում է մրցանակը։

II. Ընկերութիւնս տալիս է իւրաքանչիւր մրցանակ 50 ր. ամենաշնորհաւոր բոմանս կամ խմբերգ (բալլադա, լէգենդա) գրողին։

Մրցանակաբաշխութեան պայմանները։

1) Մրցանակաբաշխութեան կարող են մասնակցել բոլոր հայ երաժիշտ-երաժշտագէտները։

2) Մրցանակաբաշխութեան համար պէտք է ներկայացնել բոլորովին նոր և ինքնուրոյն աշխատութիւն, որը ոչ մի տեղ տպագրված չը պէտք է լինի և ոչ էլ հրապարակով կատարված որևէ համերգում կամ հանդէսում։

3) Մրցանակ ստացող երաժիշտը պարտաւոր է իր երկը 2 տարվայ ընթացքում տպագրել կամ Ընկերութեանս միջոցով (որոշ համաձայնութեան գալով) կամ իր սեփական հայեցողութեամբ։ Հակառակ դէպքում հրատարակելու իրաւունքը վերջնութիւնս իրան է վերապահում։

4) Աշխատութեան վրա չը պէտք է գրած լինի հեղինակի ազգանունը, այլ որևէ ծածկանուն. իսկ նոյն ծածկանունը կրող փակ ծրարում պէտք է յիշված լինի հեղինակի ազգանունը և մանրամասն հասցէն, որը կը բացվի միայն մրցանակաբաշխութիւնից յետոյ, եթէ արժանացած լինի մրցանակի։

5) Մրցանակի չարժանացած աշխատութիւնները և փակ ծրարները վերադարձվում են հեղինակին նոյնութեամբ, վարչութեանս միջոցով (до востребованія)։

6) Ժիւրիի կողմից մրցանակի արժանացած աշխատութիւնների ձեռագիրները մնում են Ընկերութեանս գրադարանում։ Միայն հեղինակի ցանկութեամբ և հաշով կուղարկվեն պատճէնները։

7) Աշխատութիւնները պէտք է ուղարկել մինչև 1913 թ. նոյեմբերի 20-ը, որից յետոյ ստացված աշխատութիւնները ի նկատի չեն առնվի։

8) Հրապարակով առաջին անգամ կատարելու իրաւունքը պատկանում է Ընկերութեանս։

9) Մրցանակաբաշխութեան համար վարչութեանս կից կազմված է մասնագէտներից բաղկացած յատուկ ժիւրի։

10) Թէ աշխատութեան և թէ փակ ծրարի վրա պէտք է անպատճառ յիշել «յանձնել մրցանակաբաշխութեան ժիւրիին» բառերը։

Վարչութեանս հասցէն. Тифлисъ, Правленіе Тифлисскаго Армянскаго Музыкальнаго Общества. Евангуловская, 8. Предсѣдательницѣ Ю. И. Спендіаровой.

427. 2—1

չ.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный